Azg
Ազգ
22 ԱՊՐԻԼ 2005 ՈՒՐԲԱԹ 72 (3238)

Ադրբեջանում ԱՄՆ դեսպանությունը նախապես գիտե՞ր սեպտեմբերի 11-ի մասին

ԲԱՔՈՒ, 21 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես գրում է Բաքվի «Էխո» թերթը, ԱՄՆ-ում կայացել է ՀԴԲ-ում թուրքերենի, ադրբեջաներենի եւ պարսկերենի թարգմանիչ աշխատած Սիբել Էդմոնդսի մամլո ասուլիսը: Սիբել Էդմոնդսն արդեն մի քանի տարի ԱՄՆ-ում շարունակվող սկանդալի կենտրոնական դեմքն է: Ըստ անձամբ թարգմանչուհու, որ ՀԴԲ-ում աշխատանքի է ընդունվել 2001 թվականի սեպտեմբերին, նա հայտնաբերել է հին փաստաթղթեր, որտեղ տեղեկություններ են պարունակվում ԱՄՆ-ում նախապատրաստվող ահաբեկչությունների մասին: Այժմ Սիբել Էդմոնդսը մեղադրում է ԱՄՆ-ի իշխանություններին անհիրավազորության մեջ եւ հավաստիացնում, որ Սպիտակ տունը 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների նախօրեին բավարար տեղեկություններ է ունեցել դրանց նախապատրաստման վերաբերյալ: Ի պատասխան ՀԴԲ-ն գաղտնի է հայտարարել եւ Ս. Էդմոնդսի ծառայողական փաստաթղթերից քաղած տեղեկատվությունը, եւ անձամբ Էդմոնդսի անհատական տվյալները: Ըստ որոշ տվյալների, այն նյութերի թվում, որոնք վկայակոչում է Էդմոնդսը, հիշատակվում են եւ իրանցի փախստական Զաֆերիի ցուցմունքները, որը Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանության աշխատակիցներին հայտնել է Իրանի բարձրագույն ղեկավարության հետ «Ալ Ղաիդայի» ղեկավարների հանդիպումների եւ ԱՄՆ-ում 2001 թվականի ամռանը-աշնանը մասշտաբային ահաբեկչությունների նախապատրաստման մասին:

Գերմանիան ներողություն է հայցում հայ ժողովրդից

Միասնական կարծիք Բունդեսթագում

ԼՈՒՍԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Ինչպես արդեն տեղեկացրել էինք մեր ընթերցողներին, երեկ՝ ապրիլի 21-ին Բունդեսթագում քննարկման դրվեց Հայոց ցեղասպանության մասին ընդդիմության՝ Քրիստոնեա-դեմոկրատների եւ Քրիստոնեա-սոցիալիստների միության հայտարարության տեքստը: Հարցին հատկացված 45 րոպեից միչ ավելի տեւած նիստում բոլոր կուսակցությունները պիտի հայտնեին իրենց կարծիքը ներկայացված առաջարկի վերաբերյալ: Նիստին ներկա բեռլինահայ փաստաբան **Ստեփան Թաշչյանը** «**Ազգին**» հաղորդեց, թե բոլոր կուսակցությունները՝ իշխող Սոցիալ-դեմոկրատները, Կանաչները, Ազատ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչներն իրենց ելույթներում 20-րդ դարասկզբին հայերի հետ կատարվածը միակարծիք որակել են ցեղասպանություն բառեզրով: Հիշեցնենք, որ ՔՊՄ-ՔՍՄ-ն իր հեղինակած առաջարկի տեքստում խուսափել էր ցեղասպանություն բառեզրից, փոխարենը կատարվածը ջարդ, եղեռն (Massaker) որակելով: Հինգշաբթի հրավիրված նիստի ժամանակ ՔՊՄ-ՔՍՄ-ն շեշտել է, թե թեպետ կատարվածը լիովին համապատասխանում է Լեմկինի ստեղծած ցեղասպանություն բառեզրին, բայց իրենք հավատարիմ են մնում առաջարկի տեքստին եւ խուսափում են ցեղասպանություն բառեզրից՝ պարզապես մի նկատառումից ելնելով. որ թուրքերն ավելի հեշտ, ավելի դյուրին վերանայեն իրենց պատմական անցյալը:

Ողբերգության կրկնության վտանգը մեծ է, երբ դրա մասին չեն խոսում, ասել է ՔՊՄ-ՔՍՄ-ի պատգամավոր Պֆլյուգերը: Կանաչների ներկայացուցիչ Ֆրից Քոտենը ներողություն է հայցել հայ ժողովրդից կայզերական Գերմանիայի մեղսակցության ետպատասխանատվության համար: Թեպետ բոլորի ելույթներն էլ կառուցված են եղել պատմական ճշմարտության անաչառ գնահատումը հիմք ընդունելով, սակայն ամենահստակը խոսել է սոցիալ-դեմոկրատ Մարկոս Մերկելը: Երեկվա քննարկումներին հաջորդելու են հանձնաժողովների կողմից այդ քննարկումների արձանագրությունների լրամշակումը եւ բանաձեւի նախագծի ձեւավորումը:

Փաստորեն երեկվա քննարկումներից կարելի է հուսալ, որ մայիսի վերջին-հունիսի սկզբին Բունդեսթագ ներկայացվող նախագիծը լինելու է միասնական, ցեղասպանություն բառի հստակ գործածությամբ:

«Կարելի՞ է նիստը հաջողված համարել», մեր հարցին ի պատասխան Բեռլինում ՀՀ դեսպան **Կարինե Դազինյանը** միանշանակ դական գնահատեց կուսակցությունների ընդհանուր մոտեցումը Հայոց ցեղասպանության հարցին: Տիկին Դազինյանն էլ հույս հայտնեց, որ մայիսի վերջին-հունիսի սկզբին ներկայացվող նախագիծը կլինի միասնական ու անաչառ՝ ցեղասպանություն բառի հստակ կիրառմամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Երեւանը վերահաստատում է. Թուրքիայի հետ հարաբերություններ առանց նախապայմանների

Վարդան Օսկանյան. «Մասիսը հիշեցնում է մեր կորուստները»

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը վերահաստատեց պաշտոնական Երեւանի դիրքորոշումը՝ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել առանց նախապայմանների: Հայոց մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված «Ճանապարհն հանցանք, ծայրագույն մարտահրավեր» երկօրյա միջազգային համաժողովի եզրափակիչ ելույթում, ապա դրան հաջորդած մամուլի ասուլիսում Վարդան Օսկանյանը դարձյալ հայտարարեց, որ ցեղասպանության ճանաչումը նախապայման չէ Անկարայի հետ հարաբերություններում:

Իր զգացմունքային ելույթում արտգործնախարարը հավաքածներին ասաց, որ Մասիս սարը հիշեցնում է հայկական կորուստները: Օսկանյանը նշեց, որ օսմանյան կառավարությունը ծրագրել եւ իրականացրել է հայ ժողովրդի բնաջնջումը պատմական հայրենիքում, մեջբերեց 1910-ական թթ. Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Մորգենթաուի տված որակումը՝ «մի ողջ ցեղի կոտորած»: Նախարարն ընդգծեց, որ Օսմանյան կայսրությունում հայկական կոտորածները համապատասխանում են ցեղասպանություն որակմանը:

Տես էջ 3

Հայ եկեղեցու պատվիրակությունը կմասնակցի Բենեդիկտ ԺՁ պապի գահակալությանը

Մայր աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգից հաղորդում են, որ ապրիլի 23-ին Վատիկան կմեկնի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու պատվիրակությունը՝ հանուն Ամենայն հայոց կաթողիկոսության մասնակցելու Հռոմի քահանայապետ եւ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Բենեդիկտ ԺՁ նորընտիր պապի գահակալության արարողությանն ապրիլի 24-ին: Պատվիրակության կազմում են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանը, Մայր աթոռի միաբան Ներսես արք. Պոզապալյանը եւ Տրդատ աբդ. Ուզունյանը իբրեւ պատրիարքի գավազանակիր:

Լոս Անջելեսի դատարանը կարճեց ՀԲԸՄիության դեմ Մեսրոպ արք. Մութաֆյանի դատը

Լոս Անջելեսի դաշնային դատարանը հիմքերի բացակայության պատճառով կարճեց Հայկական բարեգործական ընդհանուր միության դեմ Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանի հարուցած գործը, Նյու Յորքից հաղորդում է «**Ազգի**» մասնավոր թղթակիցը:

Ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, 2005 թ. հունվարի 13-ին Մեսրոպ պատրիարքը հանուն Պոլսո հայոց պատրիարքության դատական գործ էր հարուցել Լոս Անջելեսի նահանգային դատարանում, ՀԲԸՄիությունից պահանջելով «Մելգոնյան կտակի վերաբերյալ հաշվետվությունը, այսինքն՝ շուրջ 80 տարի առաջ Կարապետ աղա Մելգոնյանի նվիրատվության փոխանցումը Պոլսո պատրիարքության՝ պատճառաբանելով, որ Կիպրոսի Մելգոնյան վարժարանը ՀԲԸՄիությունը փակելու իր տխրահռչակ որոշմամբ դրժել էր կտակի ավանդատուի իր պարտականությունը եւ թերացել էր հարգել Պոլսո պատրիարքության նկատմամբ՝ կտակից բխող իր նյութական հանձնառությունները:

Իր հերթին, ՀԲԸՄիությունը պահանջել էր հարուցված գործը կամ հիմքից զուտկ համարել եւ կամ տեղափոխել Նյու Յորքի դաշնային դատարան:

Ապրիլի 15-ին դաշնային դատարանի դատավոր Մանուել Ռեալը վճռեց անհիմն նկատել Մեսրոպ պատրիարքի հարուցած գործը եւ զրկել նրան նույն հայցը հետագայում հարուցելու իրավունքից: Դատարանը մերժեց նաեւ գործը Նյու Յորք տեղափոխելու ՀԲԸՄիության խնդրանքը:

Ուրուգվահայ առաջնորդը նորընտիր պապի մասին

Մոնտեվիդեոյի «Կոմիտաս» ռադիոժամի վարիչ **Կարո Հեքիմյանից** երեկ «**Ազգը**» նամակ ստացավ, որտեղ նա նշում է, թե ինքը հարցազրույց է վարել Ուրուգվահայ թեմի առաջնորդ Հակոբ արք. Գըլըճյանի հետ: Թեմի առաջնորդը, որը երկար տարիներ ծառայել է Գերմանիայի հայկական գաղութում, մոտիկից ճանաչել է Հռոմի նորընտիր պապ Յոզեֆ Ռացինգերին: «Կոմիտաս» ռադիոժամի այն հարցին, թե ինչ գիտի առաջնորդը նորընտիր պապի մասին, սրբազան հայրը պատասխանել է. «Հիանալի անձնավորություն է, բարոյապես շատ բարձր սկզբունքների տեր, որովհետեւ երջանկահիշատակ Վազգեն Առաջինի Գերմանիա այցելության ժամանակ, երբ թուրքական դեսպանատան կողմից որոշ ճնշումներ եղան նրան անշուշտ ընդունելու համար, կարդինալ Ռացինգերը դրան կարեւորություն չտվեց»: Ուրուգվահայ առաջնորդը վստահաբար նշել է նաեւ, որ նորընտիր պապը շատ հայասեր է, լավ գիտի մեր եկեղեցու պատմությունը եւ մեծ հարգանք ունի Հայ եկեղեցու, Սուրբ Էջմիածնի նկատմամբ: «Հենց դրա համար էլ մենք միացած ենք Հռոմի կաթոլիկ եկեղեցու ուրախությանը, հոգով, սրտով գոհ ենք եւ ուրախ», եզրափակել է Հակոբ արք. Գըլըճյանը:

«Կամ կմտնենք ԵՄ եւ կդառնանք առողջ ժողովուրդ, կամ էլ կմնանք հիվանդ վիճակում»

Համաժողովում հայտարարեց թուրք գիտնականը

ՀԱԿՈԲ ՉԱԼԲՅԱՆ

«**Ազգը**» նախորդ համարում անդրադառնալով «Ճանապարհն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» թեմայով Երեւանում հրավիրված միջազգային համաժողովին, նշել էր դրա աշխատանքներին Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի պրոֆ. Բասքըն Օրանի եւ Ստամբուլի Բիլգի համալսարանի գրականության պրոֆ. Մուրադ Բելգեի մասնակցության մասին: Հայոց ցեղասպանության նկատմամբ Թուրքիայի ժխտողական դիրքորոշումն ու պատմությունը հենց ժխտողականության դիրքերից պատմաբանների հայեցողությանը թողնելու թուրքական թեզն առանձնակի հետաքրքրականություն էր հաղորդում թուրք գիտնականների երեւանյան ելույթներին, որոնցից Բելգեն համաժողովին մասնակցեց զեկուցողի կարգավիճակով:

Մուրադ Բելգե

Նա ասաց, որ ինքը պատասխանատվություն չի կրում ցեղասպանության համար, ոչ էլ աղագա սերունդները, այնուհանդերձ, քաղաքացին է մի պետության, որտեղ դա տեղի է ունեցել, ուստի քանի դեռ փաստը ժխտվում է, պատասխանատու է լինելու: «Ես գալիս եմ մի երկրից, շարունակեց նա, որտեղ անհատները հիշողություն չեն ունենում, պետությունը մեզ ասում է ինչը հիշել, ինչը՝ ոչ, եւ մենք մասնագիտանում ենք մոռացության մեջ: Կատարվածը ոչ ոքի համար գաղտնիք չէ: Մարդիկ, ինչ խոսք, գիտեին այդ ամենի մասին, սակայն այդ սերունդը մահացավ, սերունդների միջեւ առաջացավ խզում»:

Տես էջ 3

Երկաթուղային խոշոր վթար Հնդկաստանում

Հնդկաստանի արեւմուտքում՝ Գուջարաթի նահանգում երեկ առավոտյան Վարանասի քաղաքից Ահմեդաբադ մեկնած մարդատար գնացքը Սամալիա գյուղի մոտակայքում բախվել է բեռնատար շարժակազմի հետ: Բախման հետեւանքով մարդատար գնացքի հինգ վագոններ դուրս են եկել ռելսերից, մարդատար գնացքի մեքենավարը եւ նրա օգնականը զոհվել են:

Զոհված ուղեւորների թիվն առնվազն երեք տասնյակ է, բայց չի բացառվում, որ հասնի 100-ի: Վիրավորների թիվն անցնում է 80-ից:

Վթարված գնացքը «Սաբարմատի էքսպրես» ճեպընթացն է: Աղետի վայր է այցելել երկաթուղային տրանսպորտի նախարար Լալու Պրասադ Յադավը: Նրա ենթադրության համաձայն, աղետի պատճառը վերոհիշյալ գյուղի մերձակա ուղեմասում լուսադրանշանների հետ կապված խնդիրներն են:

Պ. Ք.

Աշխատողների եւ թոշակառուների ժողովրդագրական հարաբերակցությունը Հայաստանում աղեսալի է

Ասում է ՀՀ սոցապահովագրության պետական հիմնադրամի նախագահը

5.71 մլն ԱՄՆ դոլար վարկային նոր ծրագիրը, որն, ի դեմ, անկախացումից հետո սոցիալական ոլորտի առաջին նախագիծն է, նախատեսում է սոցիալական ոլորտի կառավարման բարելավման ճանապարհով բարեփոխել աղքատության պատկերը հանրապետությունում: Մոտավորապես այնպես, որ ջրամատակարարումը բարելավելու համար իտալական «Էյ Յուիֆիֆին» մի քանի տասնյակ միլիոն ծախսեց, բայց դրանից ջրի որակը եւ սպասարկումը երբեմ էլ երաշխավորված չեն ոչ հիմա, ոչ ապագայում, որովհետեւ ողջ հանրապետությունով մեկ ջրատար խողովակների ցանցը փտած է:

Քաղաքակիրթ Արեւմուտքի համար այդպես էլ անընկալելի մնաց, որ կառավարման ուսուցում դասավանդելու համար ամենեւին կարիք չկա սկսելու այբուբենից, որ պաշտոնական վիճակագրությամբ 40 տոկոս աղքատ բնակիչ ունեցող երկրին ավելի շատ գործնական ուղղվածության ծրագրեր են պետք:

Եվ քանի որ կառավարում ենք սովորելու, վարկային ծրագրի հիմնական նպատակը ինստիտուցիոնալ նոր կառույցների հիմնումն ու եղածների հզորացումն է լինելու:

Բնակչության համար կարեւորը թոշակների, նպաստների ավելացումն է, եւ դեղի կամ հացի փողը հազիվ հասցնող մարդու համար ամենեւին նշանակություն չունի, թե կառավարման ինչ մեխանիզմով է իրեն հասնելու իր խղճուկ գումարը:

Համաշխարհային բանկի Երեւանի գրասենյակի տնօրեն **Ռոջեր Ռոբինսոնը** հրաշալի հասկանում է այս ճշմարտությունը: Թեեյան կենտրոնում կազմակերպված հանդիպմանը, որի ընթացքում ներկայացվեց ծրագիրը, նա բազմիցս շեշտեց, որ վարկային ծրագիրն իրացնող 3 կառույցներին (սոցապնախարարություն, կենսաթոշակային եւ զբաղվածության ծառայություններ) բարդ աշխատանք է սպասում, քանի որ կառավարման կատարելագործումից նպաստներն ու թոշակները չեն ավելանալու: Ռոջեր Ռոբինսոնը, այնուամենայնիվ, իրեն պարտավորված է զգում սոցիալական բարեփոխումների ընթացքի համար, քանի որ իր 7-ամյա որդին եւս ծնվել եւ հիմա էլ Հայաստանում է:

ՀԲ գրասենյակի տնօրենի գնահատմամբ, Հայաստանում սոցիալական ծրագրերի իրականացումը ԱՊՀ երկրների համեմատ ամենաառաջավոր դիրքում է, եւ «չնայած թոշակներն ու նպաստները ցածր են, բայց գոնե վճարվում են, ոչ ինչպես ԱՊՀ բազմաթիվ երկրներում է»:

Ծրագրի ամենագործնական կողմը թերեւս մարզերի, գյուղերի ու մայրաքաղաքի միջեւ տեղեկատվության փոխանակման ժամանակակից համակարգերի ստեղծումն է, որը, ինչպես բնորոշեց սոցապահովության փոխնախարար **Արա Պետրոսյանը**, «Հայաստանում միջնադարյան մակարդակում է»: Զբաղվածության 51 տարածքային կենտրոնները կկապվեն համակարգչային ցանցով:

ՀՀ սոցապահովագրության հիմնադրամի նորանշանակ նախագահ Վազգեն Խաչիկյանը ավելի հոռետեսական տրամադրություններ արտահայտեց, քան ներկաներից այլ ոք: Նրա կարծիքով, վարկային ծրագրի կենսաթոշակային ոլորտը դժվար թե արդյունավետ լինի, քանի որ դրա նախադայմանները չկան Հայաստանում:

«Աշխատողների եւ թոշակառուների ժողովրդագրական հարաբերակցությունը հասել է աղեսալի մակարդակի, ասաց նա, Հայաստանում 430 հազար աշխատողին բաժին է ընկնում 500 հազար թոշակառու: Այսինքն, այս համակարգում բարեփոխումներ ձեռնարկելն արդեն շատ է ուշացել: Առավել եւս, որ այդ 430 հազար աշխատողներից 130 հազարը նվազագույն աշխատավարձ են ցույց տալիս իրենց փաստաթղթային ձեւակերպումներում»:

Դրա անմիջական հետեւանքն է, որ մեր թոշակառուների կենսաթոշակի միջին չափը 20 դոլարից չի անցնում:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

«Աննյոն խասեյո». ասում են կորեացիները բարեւելիս

8-րդ դասարանցի Սիսակ Բաղդասարյանը սովորում է այդ լեզուն

Հայաստանում Կորեայի հյուպատոսարանը գործում է ոչ այնքան վաղուց, բայց Կորեայի նկատմամբ հետաքրքրությունը զգալիորեն մեծացել է: Մասնավորապես, հյուպատոսարանի տրամադրած տեղեկության համաձայն, այդ երկրի նկատմամբ հետաքրքրությունը չի արտահայտվում միայն տնտեսական շահերով, կորեական ընկերությունների հետ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրությամբ:

Երեւանում գործող «Քվանտ» վարժարանը իր ուսուցման մեթոդներով առանձնանում է մյուս կրթական օջախներից: Վարժարանի տնօրեն, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու Ռ. Վարդանյանի ղեկավարած կրթարանում երեխաների հետաքրքրությունները բազմատեսակ են:

Սիսակ Բաղդասարյանը մայրաքաղաքի «Քվանտ» վարժարանի աշակերտներից է: Աշխարհագրություն առարկայից որեւէ երկրի մասին ռեֆերատ պատրաստելու հանձնարարությունը նա կատարել է ալբոմ-ռեֆերատի ձեւով՝ ընտրելով Կորեայի հանրապետությունը: Սիսակն իր կատարած աշխատանքը բաժանել է մի քանի մասերի. Կորեայի Հանրապետության աշխարհագրական դիրք, բնակչություն, լեզու եւ կրոն, սահմանադրություն եւ պետականություն, երկրի պատմություն, տնտեսություն, կրթություն, ճարտարապետություն եւ թանգարաններ, ազգային տոներ, խոհանոց եւ սպորտ:

Ոլորտների առանձնացումը Սիսակին օգնել է ավելի խոր տեղեկություններ յուրացնել Կորեայի մասին: Վարժարանի սանն անդրադարձել է ոչ միայն Կորեական թերակղզին երկու մասի բաժանած Հյուսիսային եւ Հարավային Կորեաների մայրաքաղաքներին, տարածքներին, բնակչությանը, այլեւ մոնղոլական ցեղի հետնորդներ համարվող կորեացիների լեզվին ու կրթությանը: Եռաստիճան հանրակրթական համակարգ ունեցող Կորեայի Հանրապետությունը իր աշխարհագրական դիրքի եւ վարած քաղաքականության շնորհիվ այսօր զարգացած էլեկտրոնային, տեքստիլ, նավթաքիմիական, ավտոմոբիլաշինական, պողպատաձուլական, նավաշինական երկիր է:

Ներկայումս, երբ աշխարհում ամենուր առաջնահերթ են տեղեկատվական տեխնոլոգիաներն ու գիտական ներուժի օգտագործումը արտադրության մեջ, Կորեայի Հանրապետությունը համարվում է ինֆորմացիոն տեխնոլոգիաների երկիր, որն աշխարհում առաջնային տեղ է զբաղեցնում պողպատի ձուլման, մարդատար մեքենաների, ցեմենտի, պլաստմասսայի, հեռուստացույցների եւ նավերի արտադրության ցուցանիշներով:

Թերեւս Կորեայի հյուպատոսարանի գործունեության ընթացքում առավել հետաքրքրական է այն, որ Հայաստանում սկսել են ուսումնասիրել այդ երկրի լեզուն: Սիսակն էլ աշխարհագրություն առարկայից իրեն տրված հանձնարարության առնչությամբ Կորեայի Հանրապետության վերաբերյալ իր հետաքրքրությունը չի սահմանափակել միայն ընդհանուր տեղեկություններով: «Քվանտ» վարժարանի սանը սկսել է կորերենի ուսումնասիրությունը եւ արդեն իսկ հաջողություններ է գրանցել: Իր աշխատանքը ներկայացնելուց առաջ Սիսակի «բարեւը» կորերեն էր. «Աննյոն կասեյո»: Կորերեն է նաեւ ցեսությունը. «Աննյոնի կասեյո», որին պետք է պատասխանել. «Աննյոնի կեսեյո»:

Ա. Հ.

Սիսակ Բաղդասարյանը աշխարհագրության ուսուցիչ Գուրգեն Հովհաննիսյանի հետ

Համախառն ներքին արդյունքի նկատմամբ արտաքին պարտքը նվազման միտում ունի

Կառավարության հաստատած 2004 թ. պետբյուջեի կատարողական հաշվետվությունը երեկ լրագրողներին ներկայացրեց ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար, գլխավոր գանձապետ **Ասոմ Զանջուղազյանը**: Եկամուտների եւ ծախսերի կատարման ցուցանիշները ներկայացնելուց հետո նա հայտնեց, որ անցյալ տարվա արդյունքներով Հայաստանի արտաքին պարտքը կազմել է 1 մլրդ 189 մլն դոլար, ինչը մեր համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 33,3 տոկոսն է: Գլխավոր գանձապետն արձանագրեց, որ ՀՆԱ նկատմամբ արտաքին պարտքի ցուցանիշը նվազման միտում ունի: 1999 թ. մեր երկրի արտաքին պարտքը կազմել է ստեղծված արդյունքի 47 տոկոսը: Սակայն գումարային առումով անցյալ տարի արտաքին պարտքն աճել է 85,5 մլն դոլարով կամ 7,8 տոկոսով: Սկսած 1997 թ. Հայաստանին տրվող արտոնյալ վարկերն են նվազել:

Ըստ Ասոմ Զանջուղազյանի, արտաքին պարտքի ցուցանիշով Հայաստանը գտնվում է նվազ պետական պարտք ունեցող երկրների թվում: Դրանք այն երկրներն են, որոնց արտաքին պարտքի ծավալները չեն գերազանցում երկրի համախառն ներքին արդյունքի 40 տոկոսը:

Գլխավոր գանձապետը անցյալ տարվա հաստատական փոփոխություններից համարեց ուղղակի հարկերի տեսակարար կշռի ավելացումը, ինչն արձանագրվում է առաջին անգամ: «Պետբյուջեի կատարողականի վրա ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել դոլարի արժեզրկումը» հարցին Ասոմ Զանջուղազյանը պատասխանեց, որ մեկ կամ երկու գործոնները չեն կարող «ամենանշանակալի ազդեցությունն ունենալ» պետբյուջեի վրա: Ներմուծողների եւ որոշ արտադրողների համար դա շահավետ էր, քանի որ նրանք հարկվում են դոլարին համարժեք հաշվարկվող դրույքաչափերով եւ մուտքերն այստեղ նվազ են եղել: Դոլարով կատարվող ծախսերի դեպքում էլ, օրինակ, արտաքին պարտքի վարկերի տոկոսների մարման ժամանակ, լուրջ խնայողություններ են եղել:

Ա. Մ.

Փորձնական մարդահամար Ղարաբաղում

Այս տարվա հոկտեմբերի 17-28-ը Արցախում կանցկացվի մարդահամար: Սա լինելու է ԼՂՀ անկախության տարիների առաջին մարդահամարը: Այդ կապակցությամբ մարտի 21-30-ը, կառավարության որոշման համաձայն, տեղի է ունեցել փորձնական մարդահամար՝ 5 հաշվառային տեղամասի ընդգրկումով: Փորձնական մարդահամար անցկացվել են Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի շրջանի Նորագյուղի համայնքում եւ Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում, որում ներգրավվել է 489 տնտեսություն:

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության փոխնախագահ, մարդահամարի վարչության պետ Սերգեյ Դավթյանի խոսքով, այն անցկացվել է կազմակերպված ձեւով եւ համաձայն ծրագրի: Փորձնական մարդահամարի արդյունքները ներկայումս ուսումնասիրվում են, հստակեցվում են այն կողմնորոշումները, որոնք պետք է ապահովեն այս հետագա լայնածավալ աշխատանքների արդյունավետ դրվածքը:

Մարդահամարի պատասխանատուի հավաստմամբ, ավարտված են կազմակերպչական բնույթի բոլոր աշխատանքները: Նախնական տվյալներով, այս գործընթացին կմասնակցեն 700-ից ավելի մարդիկ, որոնց առաքելությունն է լինելու ցուցակագրումը, հաշվարկումը, կողավորումը, մուտքագրումը եւ այլն:

Օրերս ԱՎԾ-ում կազմակերպվել էր սեմինար պարապմունք, որին մասնակցել են նաեւ մարդահամարի գծով շրջաններում նշանակված պատասխանատուները: Սեմինարի ընթացքում նրանք համապատասխան պարզաբանումներ եւ հանձնարարականներ են ստացել:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ,
Ստեփանակերտ

Ուսանողները ներկայացնում են փաստաբանական ինստիտուտի բարելավման առաջարկներ

Այսօր «Երեւան» հյուրանոցում տեղի կունենա իրավաբան ուսանողների հանրապետական գիտաժողովի եզրափակիչ փուլը: Ստացված հաղորդագրության համաձայն, գիտաժողովը, որ նվիրվում է Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին, կրում է «Փաստաբանություն. ներկա վիճակը եւ զարգացման հեռանկարները ՀՀ-ում» խորագիրը: Գիտաժողովի առաջին՝ գրավոր փուլը տեղի է ունեցել 10 օր առաջ, որին մասնակցած 22 ուսանողներից առավելագույն միավորներ հավաքած 7-ն այսօր կմրցեն գիտաժողովի բանավոր փուլում:

Գիտաժողովի նպատակն է բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը փաստաբանական ինստիտուտի վերաբերյալ, ապահովել նրանց մասնակցությունը վերջինիս կայացմանը: Մրցույթի կազմակերպիչները համոզված են, որ հաշվի առնելով ՀՀ փաստաբանական ինստիտուտի շուրջը ներկայումս ստեղծված անմխիթար վիճակը, իրավաբան ուսանողները կփորձեն ստեղծված իրավիճակից դուրս գալու ուրույն լուծումներ առաջարկել եւ նախանշել փաստաբանության զարգացման հեռանկարները:

Միջոցառման կազմակերպիչ Հայաստանի իրավաբանական հիմնադրամը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի իրավաբան ուսանողների բաժանմունքը հավաստիացնում են, որ մրցույթի այս փուլը կգնահատի ճանաչված իրավաբաններից կազմված ժյուրին: Իսկ հաղթողները կարժանանան արժեքավոր մրցանակների:

Թ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Լուրերի սենյակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն
/ հեռ 529353

Հանձնարարելի ծառուցիչ
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Երեւանը վերահաստատում է. Թուրքիայի հետ հարաբերություններ առանց նախադայմանների

1-ին էջից

«Թուրքական կառավարությունը շարունակում է Հայոց ցեղասպանության մերժումը եւ հերքումը, որն ախտահարում է թուրքական կառավարության դեմ», ասաց Օսկանյանը՝ ցինիզմ որակելով հարեւան հանրապետության խորհրդարանի կոչն այլ պետություններին վերանայելու իրենց պատմությունը: Թուրքական Մեջլիսը վերջերս դիմել էր բրիտանական կառավարությանը՝ հորդորելով, որ վերջինս քարոզչական որակի «Կապույտ գիրքը», որը գրվել է 1916 թ., եւ որում կարեւոր փաստաթղթեր են հավաքված Հայոց ցեղասպանության մասին:

Արտգործնախարարը շեշտեց, որ Հայաստանը պատրաստ է Թուրքիայի հետ երկխոսությանը, սակայն Երեւանը կցանկանար տեսնել բաց սահմաններ երկու պետությունների միջեւ: Նախարարը նշեց. «Մենք հարեւաններ ենք, բայց մեր պարզած ձեռքին պատասխան չենք ստացել»: Օսկանյանը նշեց, որ «կուզեինք Թուրքիան դառնա Եվրոմիության անդամ», ապա հոետորական հարց տվեց՝ արդյոք այդ երկիրը համապատասխանո՞ւմ է եվրոպական չափանիշներին:

Ցեղասպանության ճանաչում առանց բառախաղերի

Համաժողովում ելույթ ունեցած թուրք քաղաքագետ **Բասքըն Օրանն** անընդհատ այն միտքն էր առաջ տանում, որ թուրքական հասարակությունը պատրաստ չէ 1915 թ. ողբերգությունը բնորոշելու համար ընդունել ցեղասպանություն բառը: Ասուլիսում Վարդան Օսկանյանին **«Ազգն»** ուղղեց հետեւյալ հարցը. «Հայաստանի համար ընդունելի կլինի՞, եթե Թուրքիան ընդունի 1915 թ. ողբերգությունն առանց ցեղասպանություն բառն օգտագործելու»: Արտգործնախարարը պատասխանեց. «Չենք կարող բառախաղեր անել», այսինքն՝ պատշաճական Երեւանի համար ընդունելի է «իրերն իրենց անուններով կոչելը»՝ Օսմանյան կայսրությունում ծրագրվածը եւ իրականացվածը ցեղասպանություն էր:

Օսկանյանը սկզբունքորեն դեմ չէ հայ-թուրքական երկխոսությանը, սակայն համոզված է, որ «ցեղասպանության նման բարդ խնդիրը քաղաքական վակուումի մեջ հնարավոր չէ կարգավորել»: Անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ Հայաստանի նախագահին ուղղված նամակ-կոչին, Օսկանյանը նշեց, որ «պատասխան կլինի», բայց թե կոնկրետ երբ՝ «կորոշի հանրապետության նախագահը»:

Պետք չէ՞ր խնդրել Խուան Մենդեզին

Ասուլիսում Հայաստանի արտգործնախարարը զարմանք հայտնեց հետեւյալ հարցի՝ ինչ պետք է պատասխանի թուրքական կառավարությունը, երբ նրա դաշնակից Գերմանիան հայտարարի, որ տեղի է ունեցել ցեղասպանություն:

Համաժողովի երկրորդ օրը բացման խոսքով ասաց խաղաղության Նոբելյան մրցանակակիր, Լեհաստանի նախկին նախագահ **Լեխ Վալեսան**: Նախքան մարդու իրավունքների հայտնի պաշտպանին ամբիոնի մոտ հրավիրելը, հիշեցվեց, որ ընդամենը երեք օր առաջ Լեհաստանի խորհրդարանը դատապարտել էր 1915 թ. Հայոց ցեղասպանությունը:

«Թուրքիայի այսօրվա իշխանություններն ագրեսիվ կերպով հրաժարվում են ճանաչել այն հանցագործությունները, որն իրագործել են նրանց նախնիները, մինչդեռ Եվրոպան 2 անգամ դատապարտել է այդ ոճրագործությունը՝ որակելով որպես ցեղասպանություն», ասաց Նոբելյան մրցանակակիրը: Վալեսան նաեւ ընդգծեց. «Եթե մենք մոռացության տանք Հայոց ցեղասպանությունը, սակայն Երեւանը կցանկանար տեսնել բաց սահմաններ երկու պետությունների միջեւ: Նախարարը նշեց. «Մենք հարեւաններ ենք, բայց մեր պարզած ձեռքին պատասխան չենք ստացել»: Օսկանյանը նշեց, որ «կուզեինք Թուրքիան դառնա Եվրոմիության անդամ», ապա հոետորական հարց տվեց՝ արդյոք այդ երկիրը համապատասխանո՞ւմ է եվրոպական չափանիշներին:

Ցեղասպանության ճանաչում առանց բառախաղերի

Համաժողովում ելույթ ունեցած թուրք քաղաքագետ **Բասքըն Օրանն** անընդհատ այն միտքն էր առաջ տանում, որ թուրքական հասարակությունը պատրաստ չէ 1915 թ. ողբերգությունը բնորոշելու համար ընդունել ցեղասպանություն բառը: Ասուլիսում Վարդան Օսկանյանին **«Ազգն»** ուղղեց հետեւյալ հարցը. «Հայաստանի համար ընդունելի կլինի՞, եթե Թուրքիան ընդունի 1915 թ. ողբերգությունն առանց ցեղասպանություն բառն օգտագործելու»: Արտգործնախարարը պատասխանեց. «Չենք կարող բառախաղեր անել», այսինքն՝ պատշաճական Երեւանի համար ընդունելի է «իրերն իրենց անուններով կոչելը»՝ Օսմանյան կայսրությունում ծրագրվածը եւ իրականացվածը ցեղասպանություն էր:

Օսկանյանը սկզբունքորեն դեմ չէ հայ-թուրքական երկխոսությանը, սակայն համոզված է, որ «ցեղասպանության նման բարդ խնդիրը քաղաքական վակուումի մեջ հնարավոր չէ կարգավորել»: Անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ Հայաստանի նախագահին ուղղված նամակ-կոչին, Օսկանյանը նշեց, որ «պատասխան կլինի», բայց թե կոնկրետ երբ՝ «կորոշի հանրապետության նախագահը»:

Պետք չէ՞ր խնդրել Խուան Մենդեզին

Ասուլիսում Հայաստանի արտգործնախարարը զարմանք հայտնեց հետեւյալ հարցի՝ ինչ պետք է պատասխանի թուրքական կառավարությունը, երբ նրա դաշնակից Գերմանիան հայտարարի, որ տեղի է ունեցել ցեղասպանություն:

Համաժողովի երկրորդ օրը բացման խոսք ասաց խաղաղության Նոբելյան մրցանակակիր, Լեհաստանի նախկին նախագահ **Լեխ Վալեսան**: Նախքան մարդու իրավունքների հայտնի պաշտպանին ամբիոնի մոտ հրավիրելը, հիշեցվեց, որ ընդամենը երեք օր առաջ Լեհաստանի խորհրդարանը դատապարտել էր 1915 թ. Հայոց ցեղասպանությունը:

«Թուրքիայի այսօրվա իշխանություններն ագրեսիվ կերպով հրաժարվում են ճանաչել այն հանցագործությունները, որն իրագործել են նրանց նախնիները, մինչդեռ Եվրոպան 2 անգամ դատապարտել է այդ ոճրագործությունը՝ որակելով որպես ցեղասպանություն», ասաց Նոբելյան մրցանակակիրը: Վալեսան նաեւ ընդգծեց. «Եթե մենք մոռացության տանք Հայոց ցեղասպանությունը, ինչպես խորհրդային ժամանակներում, կերտվում էր վերեւից, ազգակերտման գործում ժողովուրդը պիտի սնվեր փառաբանվածությամբ: Նա նշեց, որ քանի դեռ Թուրքիան արժեք էր ներկայացնում ՆԱՏՕ-ի համար, դաշնակիցները չէին հիշում 1915 թ.-ը, ոչ էլ ճնշադատում էին: Հետեւաբար սառը պատերազմի ավարտը նպաստավոր էր հայերի եւ ոչ թե թուրքերի համար: Ըստ նրա, Թուրքիան շարունակում է պարել այդ պատերազմի տրամադրությամբ եւ չունենալով պրակտիկա, չի կարողանում նորմալ հարաբերություններ հաստատել հարեւանների հետ: Դաշնակիցները նրա առջեւ են դնում ցավոտ հարցեր, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը: Այս պայմաններում հայերը Թուրքիայի համար դառնում են դավաճան: Վերջում նա ավելացրեց. «Այնուամենայնիվ, ժամանակները փոխվել են, թուրք հասարակությունը դարձել է չափահաս, միայն թե խոչընդոտներ չլինեն: Կամ մենք կմտնենք Եվրոմիություն եւ կդառնանք առողջ ժողովուրդ, կամ էլ կմնանք հիվանդ վիճակում»:

Ինչ վերաբերում է Բասքըն Օրանին, ապա նա համեմատություն անցկացնելով երկու պետությունների եւ ժողովուրդների միջեւ, ասաց, որ նրանց միավորվածությունն ավելի քան աբխարհագրական է, քանի որ նրանցից երկուսն էլ ցավոտ հարցեր ունեն. դա Թուրքիայի համար Հյուսիսային Կիպրոսն է, իսկ Հայաստանի՝ Լեռնային Ղարաբաղը: «Ընդհանուր են, ասաց նա, նրանց արեւմտյան ընկերները, որոնք հայերին ասում են՝ մեզ ձայն տվեք, ընդունենք ձեր բանաձեւը, իսկ մեզ ասում են՝ կասարեք մեր պահանջը, որպեսզի մերժենք բանաձեւը»:

Օրանը գոհունակությամբ արտահայտվեց մեր հայրենակից Ռիչարդ Հովհաննիսյանի ելույթի մասին՝ մատնանշելով, որ դրանում ամեն ինչ ասվել է, այլ ասելիք չի մնում, ապա եւ հորդորեց հայերիս՝ թույլ չտալ երրորդ կողմերի միջամտությունը, որովհետեւ դա անհավասարի հակադրություն է առաջացնում Թուրքիայում եւ խոչընդոտում է առաջադեմ թուրք գիտնականների գործունեությանը, որոնք անձնուրացության գնով փորձում են թուրք հասարակությանը հաղորդակից դարձնել հայերի պարած դառնություններին, անցյալի ցավալի էջերին:

Վերջում Օրանն ավելացրեց. «Թուրքիան շատ մեղքեր ունի, բայց պետք է փառաբանվի, որովհետեւ Ախչամ, Բերքայ, Բելգե, Դինք եւ Մահնուտյան ունի: Հայերից քանիսն են Թուրքիան ուսումնասիրելու համար ցուցաբերում այն ջանասիրությունը, ինչ նրանք են ցուցաբերել: Թույլ մի տվեք երրորդ կողմի միջամտությունը եւ փորձեք մեզ օգնել»:

90-րդ տարելիցի հիշատակում Կանադայում

Կանադայի Հայոց եկեղեցու թեմի նախաձեռնությամբ Օտտավայի «Նոթր Դամ» մայր տաճարում միջկրոնական, էկումենիկ արարողություն եւ հիշատակի ծիսակատարություն է տեղի ունեցել ապրիլի 15-ին՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 90-րդ տարելիցին: Ըստ այդ առթիվ մեր սացած հաղորդագրության, միջոցառումն արժանացել է տեղական զանգվածային լրատվամիջոցների մեծ արձագանքին, որոնցից կարելի է նշել CTV հեռուստակայանի «Նայթ նյուս» երեկոյան լրատվական ծրագիրը, տեղական ռադիոծրագրերը, ինչպես նաեւ «Օտտավա սիթիզն» եւ «Օտտավա մետրո» համայնքային թերթերը: Ներկա են եղել 28 տարբեր եկեղեցական հարանվանությունների հոգեւոր առաջնորդները, որոնք աղոթք են բարձրացրել սպանությունների եւ բռնությունների զոհերի հիշատակին: «Մենք պարտավոր ենք բարձրաձայն «ոչ» ասել նույնիսկ ամենափոքր չափի ատելությանը եւ ռասիզմի դրսեւորմանը», ասել է հրեական համայնքի ռաբբի Ռուվեն Բուկան:

«Անցյալի ճշմարտությունից մենք դասեր պետք է քաղենք եւ փորձենք ոչ թե ատելություն սերմանել եւ պատնեշներ ստեղծել, այլ հարգել միմյանց եւ ներել», նշել է մահմեդական համայնքի հոգեւոր առաջնորդ իմամ Գամալ Սոկեյմանը:

Հազվագյուտ վերապրողներից՝ տիկին Հրաչուհի Բրանը հուզիչ անդրադարձ կատարելով անցյալի ողբերգական դեպքերին, ուրագին շնորհակալական խոսքեր է հղել կանադական կառավարությանը՝ գաղթականներին գրկաբաց ընդունելու եւ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար:

Օրվա գլխավոր բանախոսը եղել է Օտտավայի կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոս Մարսել Ժերվեն: Ներկա է եղել Կանադայում ՀՀ դեսպան Արա Պապյանը:

Հ. Ծ.

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

«Երեւանյան համաժողովը գիտական չէր, չէր կարելի դրանից լուրջ բանավեճեր ակնկալել»

Ասում է հայտնի թուրք սոցիոլոգ Թաներ Աքչամը

Ավարտվեց «Ճանաչելի հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» թեմայով Երեւանում հրավիրված միջազգային համաժողովը: Դա հրավիրել էր Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովը: Թերեւս այս հանգամանքն էլ նպաստեց, որ համաժողովն ունենա որոշակի բարձր մակարդակ, դրա աշխատանքներին մասնակցեն աշխարհի տարբեր երկրներից հայտնի մասնագետներ, այսպիսով ապահովվի համաժողովի ներկայացուցչությունը:

Կարեւորն, ինչ խոսք, համաժողովի արդյունքներն են եւ միջազգային արձագանքները: Կարեւոր է նաեւ աշխատանքների գնահատականը: Որքան էլ դժվար լինի առանց արդյունքների ամփոփումը խոսել գիտաժողովի աշխատանքների գնահատման մասին, այնուամենայնիվ, «Ազգը» գնահատականի խնդրանքով դիմեց համաժողովի մասնակիցներից Մինեսոտայի համալսարանի պրոֆ Թաներ Աքչամին:

- Ի՞նչ կարծիքի եք երեւանյան համաժողովի աշխատանքների մասին:

- Սա գիտական համաժողով չէր: Ավելի շուտ՝ համաշխարհային հասարակական կարծիքին ուղղված հիշատակման միջոցառում էր: Հետեւաբար չէր կարելի ակնկալել այստեղ գիտական լուրջ բանաձեւերի ծավալում: Համաժողովի նպատակը սեփական հարցի մասին այլ ժողովուրդներին հաղորդակից դարձնելն էր եւ նրանց աջակցությունն ստանալը: Ըստ երեւույթին, փորձ է արվում հարցի լուծումն այդ ճանապարհով ապահովել:

- Լուծում ասելիս ի՞նչ նկատի ունեք:

- Իմ կարծիքով, Թուրքիան պետք է հաշտվի իր պատմության եւ համակերպվի հայերի դեմ կատարված անարդարության փաստի հետ: Թե դա ինչպե՞ս կլինի, դժվարանում եմ ասել: Անցյալի պատմական իրադարձությունների որակումը սոսկ ցեղասպանություն բավական չէ դրա լուծման համար: Կան բազմաթիվ ձեւեր: Այդ ձեւերից կարեւորը ուժերի միջազգային հարաբերակցությունն է եւ դա ընդունելու հասարակությունների կարողությունը: Այդ առումով թուրք հասարակությունը որքա՞ն ընդունակություն կկարողանա ցուցաբերել, չգիտեմ: Միշտ չէ, որ հնարավոր է լինում արդարությունն ապահովել մինչեւ վերջ:

- Համաժողովը կնպաստի՞ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

- Որոշակի ազդեցություն կունենա կամ ոչ, որովհետեւ ճանաչման համար կարեւոր են մի շարք այլ գործոններ: Համենայն դեպս, համաժողովը կարող է սկիզբ դնել, որ հաշտեցման գործով զբաղվող մարդիկ ծանոթանան, շփվեն: Դա միաժամանակ կարող է օգտակար լինել հասարակական կազմակերպությունների մակարդակով քաղաքացիական նախաձեռնությունների ցուցաբերման համար:

- Համաժողովն ինչպե՞ս կանդրադառնա հայ-թուրքական հարաբերությունների վրա:

- Չգիտեմ, որովհետեւ այդ հարաբերությունները միջպետական են, հետեւաբար համաժողովը կարող է եւ բացասաբար անդրադառնալ: Չի բացառվում, որ թուրքական մամուլը բացասաբար արձագանքի դրան:

- Ձեր կարծիքով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հետամուտ լինելիս Հայաստանն ի վիճակի՞ է միաժամանակ բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ:

- Կարող է եւ ոչ, սակայն դրա համար չպետք է ակնկալել, որ Հայաստանը հրաժարվի ցեղասպանության ճանաչումից: Դա աբսուրդ կլինի: Միջազգային ճանաչումը Հայաստանի բնական իրավունքն է: Եթե նա երկկողմ հարաբերություններում Թուրքիայից չպահանջի ցեղասպանության ճանաչումը... Հայաստանն արդեն այդպիսի պահանջ չի ներկայացնում:

ՀԱՍՈՒՆ ՉԱՔԱՐՅԱՆ

«Կամ կմտնենք ԵՄ եւ կդառնանք...»

1-ին էջից

Այնուհետեւ Բելգեն անդրադարձավ ժամանակակից Թուրքիայի ստեղծմանը, ասաց, որ հասարակությունը, ինչպես խորհրդային ժամանակներում, կերտվում էր վերեւից, ազգակերտման գործում ժողովուրդը պիտի սնվեր փառաբանվածությամբ: Նա նշեց, որ քանի դեռ Թուրքիան արժեք էր ներկայացնում ՆԱՏՕ-ի համար, դաշնակիցները չէին հիշում 1915 թ.-ը, ոչ էլ ճնշադատում էին: Հետեւաբար սառը պատերազմի ավարտը նպաստավոր էր հայերի եւ ոչ թե թուրքերի համար: Ըստ նրա, Թուրքիան շարունակում է պարել այդ պատերազմի տրամադրությամբ եւ չունենալով պրակտիկա, չի կարողանում նորմալ հարաբերություններ հաստատել հարեւանների հետ: Դաշնակիցները նրա առջեւ են դնում ցավոտ հարցեր, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը: Այս պայմաններում հայերը Թուրքիայի համար դառնում են դավաճան: Վերջում նա ավելացրեց. «Այնուամենայնիվ, ժամանակները փոխվել են, թուրք հասարակությունը դարձել է չափահաս, միայն թե խոչընդոտներ չլինեն: Կամ մենք կմտնենք Եվրոմիություն եւ կդառնանք առողջ ժողովուրդ, կամ էլ կմնանք հիվանդ վիճակում»:

Բասքըն Օրան

Ինչ վերաբերում է Բասքըն Օրանին, ապա նա համեմատություն անցկացնելով երկու պետությունների եւ ժողովուրդների միջեւ, ասաց, որ նրանց միավորվածությունն ավելի քան աբխարհագրական է, քանի որ նրանցից երկուսն էլ ցավոտ հարցեր ունեն. դա Թուրքիայի համար Հյուսիսային Կիպրոսն է, իսկ Հայաստանի՝ Լեռնային Ղարաբաղը: «Ընդհանուր են, ասաց նա, նրանց արեւմտյան ընկերները, որոնք հայերին ասում են՝ մեզ ձայն տվեք, ընդունենք ձեր բանաձեւը, իսկ մեզ ասում են՝ կասարեք մեր պահանջը, որպեսզի մերժենք բանաձեւը»:

Օրանը գոհունակությամբ արտահայտվեց մեր հայրենակից Ռիչարդ Հովհաննիսյանի ելույթի մասին՝ մատնանշելով, որ դրանում ամեն ինչ ասվել է, այլ ասելիք չի մնում, ապա եւ հորդորեց հայերիս՝ թույլ չտալ երրորդ կողմերի միջամտությունը, որովհետեւ դա անհավասարի հակադրություն է առաջացնում Թուրքիայում եւ խոչընդոտում է առաջադեմ թուրք գիտնականների գործունեությանը, որոնք անձնուրացության գնով փորձում են թուրք հասարակությանը հաղորդակից դարձնել հայերի պարած դառնություններին, անցյալի ցավալի էջերին:

Վերջում Օրանն ավելացրեց. «Թուրքիան շատ մեղքեր ունի, բայց պետք է փառաբանվի, որովհետեւ Ախչամ, Բերքայ, Բելգե, Դինք եւ Մահնուտյան ունի: Հայերից քանիսն են Թուրքիան ուսումնասիրելու համար ցուցաբերում այն ջանասիրությունը, ինչ նրանք են ցուցաբերել: Թույլ մի տվեք երրորդ կողմի միջամտությունը եւ փորձեք մեզ օգնել»:

«Հայաստանում գլուխ է բարձրացնում երկու գարեջի երեւույթ...»

Մոսկվայան «Ноев ковчег» հայկական թերթը հրատարակել է հարցազրույց Հայաստանի հրեաների «ամենայն» ռաբբի Հերշ Մեյր Բուրշտեյնի հետ: Անկեղծ ասած, վաղուց այդման «հրեական» նյութ չէի կարդացել: Ռուսաստանում հրեաները, բացառությամբ իրենց մամուլի, չեն սիրում բացահայտ արտահայտվել ազգային հարցերի, այն միջավայրի մասին, որտեղ ապրում են: Իսկ այստեղ ռաբբին շռայլորեն տարածվում է իր մտքերում, երեւի ինքն էլ չկասկածելով, որ բացառապես այն բանի շնորհիվ, որ ապրում է Հայաստանում եւ ոչ թե, ասենք՝ Ռուսաստանում:

Հարցազրույցի ընթացքում ռաբբին նշում է այն հաջողությունները, որ ունեցել են հայաստանաբնակ հրեաները: Գլխավորը՝ հրեական համայնքը կայացել է, որ հրեան Հայաստանից կարող է սպանել այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ է, որ ԱՊՀ-ում առաջինն իրենք են բացել հրեական դպրոցներ եւ այլն: Եվ այս ֆոնի վրա առնվազն տարօրինակ է հնչում նրա այն հայտարարությունը, թե Հայաստանում գլուխ է բարձրացնում երկու գարեջի (отвратительный) երեւույթ՝ անտիսեմիտիզմ եւ նացիոնալիզմ: Մեղա՞ ֆեզ, տե՛ր Աստված, հրեան հային մեղադրում է նացիոնալիզմի մեջ: Պարզվում է, որ երկու հայ ակադեմիկոսներ գիրք են գրել՝ խեղաթյուրելով պատմությունը: Ինչի մասին է խոսքը՝ պարզ չէ, դժբախտաբար ինքս չեմ կարացել այդ գրքերը, թեեւ համոզված եմ, որ գրքում երեւի արտահայտվել են կարծիքներ, որոնք չեն համընկնում հրեական տեսակետներին: Սա լրիվ բավարար է նրանց կողմից անտիսեմիտիզմի ու նացիոնալիզմի մեջ մեղադրվելու համար: Կեցցե՛ք, ռաբբի, հրեաներդ, ես իրոք միշտ հիացել եմ ձեր այդ հատկությամբ, հասել եք այն բանին, որ ամեն մի այլ կարծիք, նվազագույն իսկ քննադատություն հրեա ժողովրդի հասցեին մերժելի է ու դատապարտելի՝ անտիսեմիտիզմ է, բայց ինքներդ ամեն մեկին կարող եք մեղադրել ինչում ուզում եք:

Եթե ես ձեր հիշյալ հայտարարությունը համարեմ գարեջի, դրա ինձ կմեղադրեք գռեհիկ անտիսեմիտիզմի մեջ: Բայց ես լռում եմ: Հետաքրքրական է, ինչ կասեք դրա, հարգելի ռաբբի, եթե մոսկվացի մի հայ սոսկ մեջբերեր (չեմ ասում պնդեր) ռուսական տիսեմիտիզմի ու նացիոնալիզմի մեջ մեղադրվելու համար: Կեցցե՛ք, ռաբբի, հրեաներդ, ես իրոք միշտ հիացել եմ ձեր այդ հատկությամբ, հասել եք այն բանին, որ ամեն մի այլ կարծիք, նվազագույն իսկ քննադատություն հրեա ժողովրդի հասցեին մերժելի է ու դատապարտելի՝ անտիսեմիտիզմ է, բայց ինքներդ ամեն մեկին կարող եք մեղադրել ինչում ուզում եք:

Եթե ես ձեր հիշյալ հայտարարությունը համարեմ գարեջի, դրա ինքն կմեղադրեք գռեհիկ անտիսեմիտիզմի մեջ: Բայց ես լռում եմ: Հետաքրքրական է, ինչ կասեք դրա, հարգելի ռաբբի, եթե մոսկվացի մի հայ սոսկ մեջբերեր (չեմ ասում պնդեր) ռուսական թերթերից մեկի այն միտքը, որ Իսրայելը ֆունդամենտալիստական պետություն է (դրա ինքներդ էլ եք հարցազրույցում ասում, որ հրեան հրեա է ճանաչվում ոչ միայն ծագումով. նա պարտադիր պետք է լինի հուդայական, հուդայականությունից դուրս հրեա չկա), որ Իսրայելը նացիոնալիստական պետություն է (ինքներդ եք ասում, որ դրա Աստծո ընտրյալ ազգ եք), որ Իսրայելը ռասիստական պետություն է, թեկուզեւ արաբների նկատմամբ, եւ այլն: Չգո՞ւմ եք նման վերաբերմունք հայերից: Հազիվ թե: Գիտե՞ք, ինձ՝ զտարյուն հայիս, Մոսկվայի փողոցներում քանի՞ անգամ են անվանել «ջհուդական մռութ»: Գուցե նման եմ: Իսկ մի անգամ, երբ մոտենում էի հատակական տրանսպորտի կանգառին, որտեղ շատ սպասողներ կային, հանկարծ մի կին, որը մինչ այդ խաղաղ ճեմում էր, տեսնելով ինձ, հիստերիայի մեջ ընկավ ու ձենը գլուխը գցած գոռաց՝ հերի՞ք է, հերի՞ք է թալանեք ու այլասերեք Ռուսաստանը, չկվեք ձեր Իսրայել:

Երեւանի փողոցներում դրա նման վերաբերմունքի հաճախ եք արժանանում: Որեւէ մեկը թո՞ւմ է Դավթի աստղի կամ, ինչպես Երուսաղեմում հայ եկեղեցականների, Ձեր վրա: Իսկ դրա ասում եք՝ հայերդ նացիոնալիստ ու անտիսեմիտ եք: Եղա՞վ:

Իսկ մենք ինչո՞ւմ ձեզ մեղադրենք, հարգելի ռաբբի, երբ դրա, պատասխանելով Հոլոքոսթի հուշարձան կանգնեցնել Երեւանում, առավելագույնս խուսափում եք պատասխանել թղթակցի հարցերին հրեաների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցի առնչությամբ: Այդ փաստի անտեսումը դրա վերագրում եք Իսրայելի կառավարությանը (Թուրքիայի հետ հարաբերությունները հիանալի են), բայց ոչ հրեա ժողովրդին: Բայց երբ թղթակիցը համառորեն փորձում է իմանալ ձեր անձնական կարծիքը (որպես հրեա ժողովրդի մի մասնիկի), դրա ձեր երկարաբունչ ամպամած խուսանավումներում տեղ չեք գտնում արտաբերելու մի պարզ նախադասություն՝ ես անձամբ ճանաչում եմ:

Ո՛չ, ինչո՞ւ պիտի ճանաչեք, միայն դրա եք տառապել ազգասպանությունից, ուրեմն աշխարհը միայն ձեր առաջ պիտի խոնարհվի, միայն ձեզ պիտի փոխհատուցի բարոյապես ու նյութապես: Եվ ինչ արժեք ունի ձեր այն «գեղեցիկ» հայտարարությունը, թե ցեղասպանությունը ոչ միայն այն ազգի խնդիրն է, որի նկատմամբ իրականացվել է, դա համայն աշխարհի գործն է: Թե՞ դրա, ռաբբի, միայն հրեա եք, բայց ոչ աշխարհի քաղաքացի: Կամ անդամն եք... Իսրայելի կառավարության:

Ի դեպ, երբ ռուսաստանյան մթնոլորտից հետո հայտնվում եմ Հայաստանում, գիտե՞ք ինչն է ինձ անսովոր թվում՝ հայաստանցիների վճիռ հայրենասիրությունը: Հավատացեք, չեմ չափազանցնում: Ես կարող եմ բանավեճի մեջ մտնել ձեզ հետ հարցազրույցում արտահայտված որիշ մոտեցումների կապակցությամբ, բայց իմաստ չեմ տեսնում:

Վերջում, որպեսզի, կրկնում եմ, ինձ էլ հրեայաց չհամարեք, կուզեի «հրեանոպաս» մի ենթադրություն անել: Մոսկվացի շատ հայեր այստեղի իրենց մի երեւելի հայրենակցի համարում են Հայաստանի ղեկավարի հավանական թեկնածու: Եվ գիտե՞ք, թե ինչու ես չեմ բացառում նման տարբերակը: Որովհետեւ նրա կինը...

ՀՈՎՍԵՓ Հ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Մոսկվա

Մահացել է ֆրանսահայ պատմաբան Արթուր Բեյլերյանը

Օրերս իր մահկանացուն է կնքել ֆրանսահայ հանրահայտ պատմաբան, ՌԱԿ անդամ Արթուր Բեյլերյանը: Նա իր կյանքի մեծ մասը նվիրաբերել է Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործին: Դրա սկզբի համար հիմք են ծառայել 1956 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսի ներքաղաքական խժդժությունները: Մխիթարյան միաբանությունում կրթություն ստանալուց հետո Բեյլերյանը սովորել է նաեւ Կոստանդնուպոլսի համալսարանի գրականության եւ լեզվաբանության բաժնում, ուսումնասիրել է եվրոպական, թուրք-իսլամական արվեստ, ընդհանուր աշխարհագրություն: Երկար տարիներ Փարիզում բնակվելուց հետո, 1972 թ. Սորբոնի համալսարանում պաշտպանել է «Հայկական հարցի ակունքները Սան Ստեֆանոյի պայմանագրից մինչեւ Բեռլինի կոնգրես» թեմայով ատենախոսությունը, որն, ի դեպ, անտիպ է:

Արթուր Բեյլերյանը Հայոց ցեղասպանությանն առնչվող բազմաթիվ գրքեր է գրել, սակայն նրա գլխավոր գործը «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-18 թթ.)» գիրքն է: Բեյլերյանի ուսումնասիրությունները եւ Ֆրանսիայի պետական արխիվում ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերին տեղյակությունը, որ արտահայտվել է նրա գործերում, հնարավորություն են տվել միջազգային մասնագիտական շրջանակներին ներկայացնելու պատմության այդ հատվածի իրական ընթացքը:

Ն. Գ.

Նոր հրատարակություն. «ՌԱԿ-ի մամուլի խմբագիրները»

Այս անունն է կրում Հովիկ Յորդեքյանի աշխատությունը, որը մարտի կեսերին լույս է տեսել Երեւանում՝ արեւմտահայերենով եւ դասական ուղղագրությամբ: Ա-5 չափսի 132 էջ ծավալով հրատարակության մեկենասն է «ՌԱԿ-ի Կեդրոնական վարչության մամլոյ դիւանի ատենապետ Յակոբ Վարդիվառեանը, Նիւ Ճըրզի», ինչպես նշված է գրքում:

Հեղինակը, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, շատ մոտիկից շփվել է ՌԱԿ կառույցների եւ մամուլի հետ: 1985-1987 թթ. եղել է պատասխանատու խմբագիր ՌԱԿ Հարավային Ամերիկայի պատասխանաբերք «Սարդարապատ» շաբաթաթերթի, գործուն մասնակցություն ունեցել ՀՌԱԿ-ի եւ **«Ազգ»** թերթի հիմնադրման աշխատանքներում: Հեղինակն է «Համառոտ պատմութիւն ՀՌԱԿ-ի» գրույկի (Երեւան, 1996 թ.):

Ուսումնասիրությունն սկսվում է դոկտ. Վաչէ Ղազարյանի «Յառաջաբանով» (էջ 4-6), ուր նա ընդհանուր խորհրդածություններ է կատարում ՌԱԿ մամուլի էության, դավանած սկզբունքների եւ առնչակից հարցերի մասին: Ըստ Ղազարյանի՝ ՌԱԿ մամուլը «Բաղդատաբար նուազ չափով կրած է կաշկանդիչ ազդեցութիւնը վերադաս մարմիններու եւ որոշումներու» (էջ 5): Ըստ նրա՝ տվյալ աշխատությունը ՌԱԿ մամուլի «նուիրեալներուն հակիրճ կենսագրականներուն մէկտեղման առաջին փորձն է» (էջ 6):

«Երկու խօսքում» (էջ 7-9) հեղինակը եւս ընդհանուր արժեւորումն է կատարում ՌԱԿ մամուլի անցած պատմության, թեեւ նշում է, որ «ինչպես ՌԱԿ-ի ամբողջական պատմութեան, այնպէս ալ անոր ստեղծած մամուլին գիտական ուսումնասիրութիւնը դեռ պէտք է կատարուի» (էջ 8): Այս ուղղությամբ կատարված աշխատանքների մեջ նա առանձնացնում է լիբանանահայ բանաստեղծ Ժիրայր Դանիելյանի «ՌԱԿ-ի մամուլն այսօր» հրատարակված մատենագիտական ակնարկը: Հ. Յորդեքյանը հայտնում է, որ «այս գրքոյկը որոշ վերապահումով կարելի է իբրեւ կենսագրական բառարան եւ ՌԱԿ-ի մամուլի պատմութեան թերեւ սկզբնաղբիւր նկատել» (էջ 8):

Բուն ուսումնասիրությունը բաղկացած է երեք մասից: Ամենից ընդարձակը «ՌԱԿ-ի պատասխանական յառնումէն ասդին հրատարակուած պատասխանաթերթերուն, ինչպէս նաեւ ՌԱԿ-ի հովանաւորութեամբ լոյս տեսած թերթերուն ու անոնց պատասխանատու խմբագիրներուն» նվիրված բաժինն է (էջ 10-113), թեեւ ցանկն սկսվում է Եգիպտոսում 1915 թ. հիմնված «Արեւ»-ով (ՌԱԿ-ը պատասխանատես հիմնվել է 1921 թ. հոկտեմբերի 1-ին, Պոլսում): Այս բաժնում իրենց ծննդի ժամանակագրական կարգով տեղ են գտել 30 պարբերականներ. շարքը եզրափակում է 1992 թ. Գյումրիում հիմնված «Ջայն ռամկավարաց» (հետագայում՝ «Ազեցիս»): Յուրաքանչյուր պարբերականի համար շատ հակիրճ ներկայացվում է նրա համառոտ պատմությունը՝ ենթավերնագիրը, հրատարակության փուլերը եւ կրած փոփոխությունները, խմբագրմանն աջակցած անձերի անունները եւ այլն: Այնուհետեւ տրվում է պատասխանատու խմբագիրների ցանկը՝ խմբագրման ժամանակահատվածի նշմամբ: Հաջորդում է ցանկի յուրաքանչյուր անվան կենսագրությունը, որտեղ շեշտը դրվում է անհատի խմբագրական, հրատարակչական, գրական, մանկավարժական եւ հասարակական-քաղաքական գործունեության վրա:

Ուսումնասիրության մյուս երկու բաժիններն են «ՌԱԿ-ի կազմութեան նախորդած գաղափարակից կուսակցութիւններու պատասխանաթերթերու» եւ «Արմենական, վերակազմեալ Հնչակեան, Սահմանադրական ռամկավար եւ Ռամկավար ազատական անհատներու հրատարակած թերթերու եւ Ազատական ռամկավար ուղղութեան

համակիր մամուլի» մատենագիտական ցանկերը (համապատասխանաբար՝ էջ 114-120, 42 անուն պարբերական եւ էջ 121-127, 66 անուն պարբերական): Այս բաժիններում պարբերականները ներկայացվում են այբբենական հաջորդականությամբ, նշելով ենթավերնագիրը կամ բնույթը, խմբագիրների անունները, հրատարակության վայրն ու թվականները եւ այլն:

Ուսումնասիրության ավարտին բերված է օգտագործված գրականության ցանկը (15 անուն). օգտագործված են հենց իրենք՝ ՌԱԿ մամուլի հավաքածուները:

Պատմաբանասիրական, մասնավորաբար մամուլին առնչվող ուսումնասիրությունները տնաջան աշխատանք եւ կատարվող աշխատանքի անհրաժեշտության անսասան հավատ են պահանջում: Պարզից պարզ երեւում է, որ Հովիկ Յորդեքյանի այս աշխատությունը նման աշխատանքի արգասիքն է:

Իր «Երկու խօսքում» հեղինակը հայտնում է, որ «որոշ սխալներ տեղ գտած կրնան ըլլալ գրքոյկին մէջ: Նոյնիսկ անուններ կրնան վրիպած ըլլալ մեր ուշադրութենէն» (էջ 8): Դրանք նման աշխատանքների անխուսափելի ուղեկիցն են: Բացի մի քանի, թվով աննշան միօրինականացման եւ ուղղագրական սխալներից, մյուս վրիպումները կարելի է դասակարգել հետեւյալ կետերի մեջ.

- Սխալներ. 1932 թ. հիշատակվում է Ռումինիայի նախագահը (էջ 32), մինչդեռ մինչեւ 1946 թ. Ռումինիան թագավորություն էր: ՀԿԿ Կենտկոմի մամուլի, հեռուստատեսության եւ ռադիոյի բաժանմունքը (սեկցիա) նշվել է իբրեւ «բաժին» (էջ 59): Սվազ (Սեբաստիա) քաղաքը հիշվում է Թուրքիայում (էջ 75), փոխանակ Արեւմտյան Հայաստանի: Բեյրութի ՀԲԸՄ Պողոս Կարմիրյան վարժարանի աշակերտական թերթի անունը նշվել է «Այսօր» (էջ 102), մինչդեռ լրիվ անունն է «Կարմիրեանն այսօր»:

- Բացթողումներ. **«Ազգ»** թերթին նվիրված տողերում (էջ 111-112), «խմբագրութեան մասնակիցների» անունների շարքում չի նշվել Սամվել Դիլանյանը: Հեղինակը չի նշել նաեւ հենց ի՛ր անունը 1996 թ. ապրիլի վերջ-մայիսի սկզբին թերթահենված **«Ազգի»** «խմբագրական խորհրդի» որպես պատասխանատու խմբագրի: Բաց են թողնվել մի քանի պարբերականներ, ինչպես Լիբանանի «Արմենական արիական շարժման» «Արմենական» պատասխանաթերթը, որը 1990-ականների երկրորդ կեսին մի քանի համարով լույս տեսավ Բեյրութում:

- Վիճելի է Հ. Յորդեքյանի՝ «ՌԱԿ-ի Երեւանի «Ազգ» թերթ» քառակի պնդումը (էջ 54, 78, 101, 111): ՌԱԿ-ը եթե, հանձին իր Կեդրոնական վարչության, իրողապես մեծ դեր է ունեցել **«Ազգի»** հիմնադրման մեջ, սակայն իրավական տեսակետից սխալ է նման պնդումը. դրա ապացույցն **«Ազգը»** «ՌԱԿ ներկայացուցչություն» անունով հարցեր գրանցված կազմակերպությունից վերուշին «Հիմնադիրների խորհրդին» վերադարձնելու ՀՀ դատարանի որոշումն էր 1996 թ. մայիսի սկզբին:

Այս փոքր թվով վրիպումներն ու սխալները չեն նսեմացնում Հովիկ Յորդեքյանի կատարած աշխատանքի նշանակությունը, մանավանդ որ սա նման աշխատանքի առաջին փորձն է: «ՌԱԿ-ի մամուլի խմբագիրները» ուսումնասիրությունը կարեւոր ներդրում է հայ մամուլի հետազոտության ոլորտում եւ հիմնական ու անշրջանցելի աղբյուր ՌԱԿ-ի ու նրա մամուլի պատմության հետագա գիտական աշխատանքների համար:

ՊԵՏՈՒՐ ՅԱՐՈՅԵԱՆ

Խմբ. կողմից- Գրախոսվող հատորի արագ ընթերցումն անգամ բերում է մեզ այն եզրակացության, որ սխալներն ու անճշտությունները չեն սահմանափակվում գրախոսողի նշածներով: Օրինակ, Վաչէ Ղազարյանը (էջ 54) ոչ թե 1994 թ. «դադար տուած է կուսակցական իր գործունէութեան», այլ դադարեցված է: Նմանապես, Վ. Ղազարյանը ոչ թե «քանի մը գործակիցներու հետ հիմնադրած է (...) «Ազգը», այլ պարզապես մաս է կազմել թերթի հիմնադիր խորհրդի: Թերթի հիմնադրման՝ առաջին եւ հետագայում ամբողջական համակարգչային բազայի ստեղծման գործում մեծագույն ավանդ է ունեցել Երվանդ Ազատյանը, որի մասին գրված տողերում (էջ 21-22) անտեսվել է այդ փաստը: Ինչ վերաբերում է **«Ազգի»** 1996 թ. մեկ շաբաթով «խմբագրական խորհրդի» կողմից հրատարակմանը, որի մասին գրում է գրքի հեղինակը, հայ մամուլում այդ մեկշաբաթյա թերթն առաջին օրվանից մկրտվել է որպես «կեղծ «Ազգ»: Ավելացնենք նաեւ, որ այդ մեկ շաբաթվա ընթացքում, հակառակ արդարադատության նախարարության արգելանքին, **«Ազգը»** տպագրվել է ամեն օր, 2 էջով եւ 99 օրինակով եւ չի ընդհատվել:

ԱԶԳ

Միջազգային

Ազատ շուկայական տնտեսության կարեւոր բաղկացուցիչ համարվող հարկային երեւույթների նկատմամբ մոտեցումներն ու փիլիսոփայությունը փոխվում են: Այսօր աշխարհի շատ երկրներում բարդության առումով «կատարելության» հասած հարկային օրենսդրությունն ու ըստ այդմ գործող համակարգը միայն նեղ մասնագետների համար են հասկանալի, ընդ որում, սա եւս վերջնական եւ հաստատ չէ այն առումով, որ անգամ մասնագետները հաճախ օրենսդրական «խաչմերուկներում» մանեւրում են զգալի դժվարությամբ:

Հարկային համակարգի պարզեցումը եվրոպական երկրների օրակարգի հարց

Ընդամենը բարդ համակարգը պետք է փոխարինել պարզով

Արդեն քանի տարի Եվրոպան ենթարկում է հարկային համակարգի բարելավման նոր տարբերակներ: Մասնավորապես եվրոպական հարկային համակարգի գիտակները, ընդգծելով գործող համակարգի որոշ դեպքերում արհեստականորեն բարդացված վիճակը, ավելի հաճախ են խոսում հարկային պարզ համակարգ ունենալու անհրաժեշտության մասին: Ավելի կոնկրետ, եվրոպական որոշ երկրներ արդեն իսկ օգտագործում են հարկման ավելի պարզ մեխանիզմների փորձը:

Եվ մինչ Հայաստանում հարկային մարմինները հնարավոր բոլոր միջոցներով փորձում են հիմնավորել, օրինակ, պարզեցված հարկից ազատվելու անհրաժեշտությունը, Հայաստանի համար գոնե պատշաճաթես քաղաքականության հիմնական արժեքները կրող Եվրոպայում փորձում են հարկային բարդ մոտեցումները փոխարինել պարզ տարբերակներով, ընդհուպ նաեւ ֆիքսված հարկատեսակով:

Հարկային դաշտի ու բեռի պարզեցման հարցերի ենթարկմանը անմասն չեն նաեւ եվրոպական լրատվամիջոցները: Հեղինակավոր «Էկոնոմիստ» բրիտանական հանդեսի վերջին համարի խմբագրականը վերաբերում է հենց այսպես կոչված ֆիքսված հարկ ձեւակերպմամբ հեղափոխությանը: Ըստ այդմ, որքան բարդ է երկրի հարկային համակարգը, այնքան կառավարության համար հեշտ է ավելի բարդ դարձնելը մինչեւ այն պահը, երբ կտրուկ պարզեցման պահանջն այլեւս դառնում է հրամայական:

Օրինակ, Միացյալ Նահանգներում հարկային օրենսգիրքը վերջին անգամ փոփոխությունների է ենթարկվել 1986 թ.-ին, իսկ դրանից հետո, «Էկոնոմիստի» խմբագրականի համաձայն, ժամանակը ծախսվել է հարկային համակարգը բարդացնելու վրա: Այս օրինակն արդիական է նաեւ այլ զարգացած երկրների համար: Բայց հարկային ընդունված համակարգին կա այլընտրանք, որն իր կիրառությունն է ստացել մի շարք եվրոպական երկրներում:

Ընդ որում, այդ նույն պրակտիկան ապացուցել է, որ այլընտրանքային տարբերակը ոչ միայն ավելի պարզ է, այլեւ իրատեսական: Դեռեւս 1994 թ.-ից Էստոնիայում սկսված փորձը առաջին դեպքն էր, երբ ներմուծվեց անհատական եւ կորպորատիվ եկամտի հարկման այսպես կոչված «հարթ» կամ ֆիքսված հարկը: Էստոնիայի տնտեսությունն այդտեղ ուղղակի ծաղկում ապրեց: 1994 թ.-ի բարեփոխումներից հետո Էստոնիայի տնտեսական աճի ցուցանիշը երկնիշ դարձավ արդեն 1997 թ.-ին, այնուհետեւ տարեկան մոտ 6 տոկոս աճ ապահովվեց: Ընդ որում, ֆիքսված հարկ կիրառող առաջին երկիրը ներկայումս էլ հարկման ամենաբարձր տոկոսն ունի, որ ծրագրում է մինչեւ 2007 թ. 26-ից իջեցնել 20 տոկոսի:

Ֆիքսված հարկով հարկման էությունն այն է, որ եկամուտը հարկվում է միատեսակ 26 տոկոս տոկոսադրույքով առանց արտոնությունների, առանց պայմանների: Էստոնիայի օրինակին հետեւեցին Լատվիան եւ Լիտվան, ավելի ուշ՝ Ռուսաստանը (անձի եկամտի 13 տոկոսի հարկմամբ), ապա Սլովակիան՝ 19 տոկոսի հարկմամբ ինչպես անհատական, այնպես էլ կորպորատիվ եկամտի համար: Ամեն դեպքում, այսօր Էստոնիայի օրինակին են հետեւել արդեն 8 երկիր, իսկ շատ երկրներում տարբեր ուժեր համամիտ են նման համակարգի ներդրմանը:

Հարկման նման մեխանիզմի ներմուծման ընդդիմախոսները որպես փաստարկ նշում են, որ ֆիքսված հարկումը անազնիվ է: Այս մեխանիզմի ներդրմանը դեմ երկրներն իրենց հարկային համակարգը առաջադիմական են համարում հարուստից պահանջելով իր եկամտի ավելի մեծ բաժնով հատուցել այն, ինչ աղքատների դեպքում պակաս է:

Ամերիկյան կամ արեւմտաեվրոպական շատ երկրներում գործող հարկային համակարգի դեպքում հարուստներին հարկային բեռից խուսափելու մղող գործոնները բավականին ազդեցիկ են: Լայն են նաեւ օրենսդրական դաշտը շրջանցելու հնարավորությունները նույն այդ համակարգի բարդության պատճառով: Ուստի «Էկոնոմիստը» եզրակացնում է, որ ֆիքսված հարկի դեպքում հարուստն ավելի մեծ գումար կվճարի, քան ավանդական եւ կամտահարկի դեպքում, նախընտրելով մնալ օրինականության սահմաններում:

Այնուհետեւ հանդեսում բերվում է եւս երկու փաստարկ հօգուտ ֆիքսված հարկի գործածման: Նախ, բավականին բարդացված ավանդական հարկման դեպքում արհեստականորեն ուռճացված համակարգի վարչական ծախսերը ողողակի ահռելի են: Միայն Միացյալ Նահանգների օրինակի դեպքում հարկային գործառույթների իրականացման համար ծախսվում է այնքան գումար, որքան կառավարության բյուջեի պակասորդի կեսն է կամ պետության եկամուտների 10-20 տոկոսը:

Այստեղ պետք է հաշվի առնել նաեւ, որ հարկման ավանդական ձեւի դեպքում ըստ էության հսկայական ծախսեր են իրականացվում, քանի որ պետությունը միջամտում է նաեւ ռեսուրսների վերաբաշխմանը:

Որպես եւս մեկ փաստարկ ընդդեմ ավանդական հարկային համակարգի նշվում է, որ զարգացած երկրներում նույն այդ համակարգը, որպես կանոն, այնքան բացառություններ, արտոնություններ ունի, որ օրենսդրության սկզբնական ձեւից գրեթե ոչինչ չի մնացել: Ու չնայած Միացյալ Նահանգները հանձին նախագահ Բուշի նշում է հարկային օրենսգրքի փոփոխության մասին, բայց խնդիրն այնքան նեղ է դրված, որ դժվար թե վերաբերի ֆիքսված հարկի անցնելուն:

Այստեղ պետք է նաեւ հաշվի առնել, որ արեւելաեվրոպական երկրներն ավելի հակված են ծայրահեղության, քան նրանց արեւմտյան կամ անդրատլանտյան հարեւանները:

Ֆիքսված հարկն արդեն օգտագործող երկրներում եւս կան տարբերություններ նույն այս համակարգի առնչությամբ: Ավելի կոնկրետ, ֆիքսված տոկոսադրույքով է հարկվում, ասենք, միայն անձի եկամուտը, կամ էլ միայն կորպորատիվ շահույթը:

Սակայն այս դեպքում առկա է մեկ այլ վտանգ: Օրինակ, Սլովակիայում ֆիքսված հարկի համակարգի ներմուծումը սկզբում իրականացվեց միայն մեկ դեպքի նկատմամբ: Ստացվեց այնպես, որ սլովակներից ոմանք իրենք իրենց հայտարարում էին սեփական հիմնարկության ոչ վարձու աշխատող՝ շարունակելով աշխատել նույն ընկերության համար: Նրանց փաստացի աշխատավարձը հարկվում էր որպես շահույթ: Եվ ոչ միայն դա. նրանց անգամ ճաշը կարող էր մտցվել ծախսերի մեջ եւ հանվել շահույթից որպես գործարքների համար կատարված ծախսեր (բիզնես լանչեր):

Ինչեւէ, պարզվում է, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում կառավարությունն ի վերջո կողմ է բարդ համակարգերի, քանի որ սովորական քաղաքացիների համար հնարավորինս անհասկանալի վիճակի ստեղծումը օգնում է նման կառավարություններին նախ եւ առաջ հենց իրենց ապահովել աշխատանքով:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծխելու արգելքներ նաեւ Ուկրաինայում

Ուկրաինայի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել է օրենք, որն արգելում է ծխել աշխատավայրում եւ հասարակական վայրերում, ինչպես նաեւ խստացնում է ծխախոտի վաճառքի կանոնները: Օրենքի հեղինակն առողջապահության նախարար Նիկոլայ Պոլիշչուկն է:

«Կորեսպոնդենտ» ինտերնետային հրատարակությունը հաղորդում է, որ ուկրաինացիներն այսուհետեւ կկարողանան ծխել միայն հատուկ վայրերում: Նոր օրենքն արգելում է ծխախոտ գովազդել ռադիոյով, հեռատեսությամբ, տպագիր հրատարակություններում, թատրոններում, կինոթատրոններում եւ դրսում:

Արգելվում է Ուկրաինա ներմուծել այնպիսի ծխախոտ, որի մեջ նիկոտինը 1,3 միլիգրամից եւ ձյութը 15 միլիգրամից ավելի են, իսկ տուփի վրա չկա նախազգուշացում: Խորհրդարանի որոշման համաձայն, ծխախոտի բոլոր տուփերի վրա պետք է նշված լինեն «Ծխելն առաջացնում է սրտանոթային հիվանդություններ եւ թոքերի քաղցկեղ» նախազգուշացումը եւ 6 այլ նախազգուշացումներ:

Ներկայումս ուկրաինացիները ծխում են տարեկան մոտ 75 միլրդ գլանակ: Երկրում ծխախոտ է թողարկում 15 ձեռնարկություն:

Ավելի վաղ հասարակական վայրերում ծխելն արգելել էին Իտալիան, Նորվեգիան, Շվեդիան, Իռլանդիան եւ Չեռնոգորիան: Անցյալ տարվա վերջին Բութանն աշխարհում դարձավ ծխելն իսպառ արգելող առաջին երկիրը: Ռուսաստանում անցյալ տարվանից արգելված է աշխատավայրում ծխելը:

ՕՏԱՎԱՆՈՒՄ

ՆԱՏՕ-ի արտգործնախարարները Վիլնյուսից ձեռք են մեկնում Ուկրաինային

Նախկին ԽՍՀՄ տարածքում իրենց առաջին հանդիպումը Վիլնյուսում անցկացնող ՆԱՏՕ-ի երկրների արտգործնախարարները (որոնց մեջ է ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը) Ուկրաինային խոստանում են անդամակցության հեռանկար: «Մոնդը» գրում է, որ այդտեղ դեռ Կիեւի անդամակցության մասին որեւէ կերպ չի խոսվում Ռուսաստանին չգայրացնելու համար:

Անցյալ տարի ՆԱՏՕ-ին անդամակցած Լիտվայի մայրաքաղաքում դաշինքի երկրների արտգործնախարարների հանդիպումը վկայում է «սառը պատերազմից» հետո կատարված էական տեղաշարժերի մասին: Արտգործնախարարները մտադիր են իրենց ուկրաինացի պաշտոնակից Բորիս Տարասյուկին առաջարկել «արտոնյալ երկխոսություն», ինչպես նաեւ գործնական եւ քաղաքական մի շարք քայլեր: Նաեւ նախատեսվում է Ուկրաինային օգնել բանակի վերակառուցման եւ ժողովրդական բարեփոխումների անցկացման ոլորտներում:

Նախկին թշնամի Ռուսաստանի հետ կնքված համաձայնագիրը դյուրացնում է համատեղ զորավարժությունների անցկացումը եւ երկու կողմերի զինված ուժերի տարանցումը: «Ուժերի կարգավիճակին» վերաբերող փաստաթուղթը կդյուրացնի ռուսական տարածքում օտար ուժերի տեղաբաշխումն ու տարանցումը, ռուսական զորքերի համար նոր նիստի դյուրություններ ստեղծելով ՆԱՏՕ-ի երկրներում:

Վիլնյուսի հանդիպման օրակարգում է նաեւ Մերձավոր Արեւելքի հարցը: Ֆրանսիան կողմ է տարածաշրջանում ՆԱՏՕ-ի դերի սահմանափակմանը: «Տարածաշրջանում միջազգային ջանքերին փոխարինելը ՆԱՏՕ-ի կոչումը չէ», երկուշաբթի օրը հայտարարել էր Ֆրանսիայի ԱԳՆ խոսնակ Ժան-Բապտիստ Մատեին:

Արտգործնախարարները կքննարկեն նաեւ Սուդանում խաղաղապահ ուժերին աջակցելու եւ Կոսովոյում ՆԱՏՕ-ի ուժերը վերակազմակերպելու հարցերը:

Ռուսաստանն, այնուամենայնիվ, Սիրիային վաճառել է «ՏԱ-18» հրթիռակայանքներ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հաստատել է, որ Սիրիայի հետ համաձայնագիր է ստորագրել այդ երկրին «երկիր-օդ» դասի «ՏԱ-18» հակազենիթային հրթիռահամալիրներ վաճառելու վերաբերյալ: Իսրայելի հեռուստատեսության 1-ին ալիքին տված հարցազրույցում Պուտինն ասել է, որ իսրայելական օդուժն այսուհետեւ կարող է դժվարությունների բախվել, եւ իսրայելական օդանավերը չեն կարողանա թռչել Սիրիայի նախագահի պալատի վրայով:

Կուրսոր գործակալությունը հիշեցնում է, որ «ՏԱ-18» կամ «Իգլաս» հրթիռակայանքների վաճառքի շուրջը ռուս-սիրիական բանակցությունների ծավալման արդեն նախնական փուլում Իսրայելը Ռուսաստանից խնդրել էր հրաժարվել գործարքից՝ պատճառաբանելով, թե տվյալ հրթիռները կարող են ընկնել «Հզբոլլահի» ձեռքը, ինչպես նաեւ տարածաշրջանում խախտել ուժերի ռազմավարական հավասարակշռությունը: Ռուսական կողմը հիմնազուրկ էր որակել իսրայելցիների այդ պնդումները:

Ավելի վաղ Իսրայելի անվտանգության համակարգի բարձրաստիճան ներկայացուցիչներից մեկի արած հայտարարության համաձայն, իր երկիրն ունի հավաստի տեղեկություններ, որ Սիրիայի գնելիք հրթիռակայանքներից մի քանիսը հասկացվելու են շիաների «Հզբոլլահ» խմբավորմանը:

Ռուս-սիրիական գործարքը բացասական արձագանք է առաջացրել նաեւ Վաշինգտոնում: «Եթե ռուսներն այդ զենքը վաճառեն Սիրիային, ապա ԱՄՆ-ը ենթության կառնի Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ ձեռնարկելու հնարավորությունը: Տվյալ հարցում ԱՄՆ-ի քաղաքականությունը հստակ է: Մենք դեմ ենք Սիրիայի սպառազինմանը, քանի որ այդ պետությունն օժանդակում է ահաբեկչությանը», վերջերս հայտարարել էր Պետդեպարտամենտի մամլո քարտուղար Ռիչարդ Բաուչերը:

Էկվադորի նախագահը պատշաճակ է արված

Էկվադորի խորհրդարանը չորեքշաբթի օրը պատշաճակ է արել երկրի նախագահ Լուցիո Գուտիերեսին եւ նրա պատշաճում նշանակել է փոխնախագահ Ալֆրեդո Պալացիոյին: Ֆրանսպրեսի հաղորդման համաձայն, պատշաճակության պատճառը երկրում ստեղծված սոցիալ-քաղաքական ճգնաժամն է: Վերջին օրերին անցկացվել էին բողոքի բազմամարդ ցույցեր, որոնց ընթացքում զոհվել էին 2 անձինք:

Նախկին նախագահի վերաբերյալ երեկ Էկվադորում հակասական լուրեր էին պտտվում: Խորհրդարանը քվեների մեծամասնությամբ վերջ դրեց նախագահի պատշաճավարմանը, քանի որ նա փորձել էր միջամտել գերագույն դատարանի աշխատանքին: Նրան փոխարինած Ալֆրեդո Պալացիոն հայտարարեց, որ երկրում «բռնապետությունն ավարտված է»:

Պալացիոն նախագահի պատշաճում կմնա մինչեւ 2007 թ. հունվարի 15-ը, երբ ավարտվելու էր Գուտիերեսի պատշաճավարման ժամկետը: Նոր նախագահը 66-ամյա տարեց է, որն արդեն իսկ խոստացել է «վերափոխել հանրապետությունը»:

Խորհրդարանի որոշումից հետո պատշաճության նախարար, գեներալ Նելսոն Հեռերան հայտարարեց, որ բանակը ենթարկվում է որոշմանը եւ պատշաճում նոր նախագահին: Ըստ Ֆրանսպրեսի, ցուցարարներից շատերը եղբայրացել են զինվորների հետ:

Հեռմիջոցներին Գուտիերեսն ուղղաթիռով նախագահական պալատից թռել է օդանավակայան, որպեսզի մեկնի Պանամա, որտեղ իր ընտանիքն է: Բայց ցուցարարները փակել են ճանապարհը: Դրանից հետո դատավոր Ցեցիլիա դե Արմասը հայտարարել է, թե Գուտիերեսը ձերբակալված է եւ պահվում է մայրաքաղաք Կիտոյից դուրս գտնվող Բալբինայի զորանոցում: Նախագահի կալանքը, ըստ Արմասի, արդարացված է, քանի որ «ոստիկանությանը եւ զինվորականներին բացեիբաց հրամայել է ճնշել ցուցարարներին»:

Այլ տվյալների համաձայն, Գուտիերեսին հաջողվել է մուտք գործել Բրազիլիայի դեսպանատուն եւ դիվանագիտական ապաստան խնդրել: Բրազիլիայի ԱԳՆ-ից Ֆրանսպրեսի ստացած տեղեկությունների համաձայն, Բրազիլիայի կառավարությունը բավարարել է նրա խնդրանքը:

Պ. Ք.

Մշակույթ

Ծիծաղահոդ արվեստի հեղինակը

Անվանի դրամատուրգ Ժիրայր Անանյանը չհասցրեց նշել իր վաստակած 70-ամյա հոբելյանը: Մեկ տարի առաջ՝ այս օրը, նա հեռացավ մեզանից: Հազա՛ր ափսոս...

Ժիրայր Անանյանը Կարո Խաչվանքյանին նվիրված «Մենախոսության ժամին՝ արտիստի հետ» հոդվածում նշում է. «Էհ, Կարո Խաչվանքյան, կարտել եմ քեզ...»: Այժմ նոքա իրենց կարտն առել են իրարից, բայց արդյո՞ք գիտեն, որ հազարավոր ընկերներ ու բարեկամներ, արվեստի երկրպագուներ ամեն օր հիշում ու կարտում են իրենց: Ժիրայր Անանյանը հումորով ու հումորի դրամատուրգ էր: Նա գրում էր իր ուզածի պես, իր երկրի, իր ժողովրդի, իր շրջապատի մասին: Գրում էր այնպես, որ ընդունվեր բոլորի կողմից: Եվ իրոք, դա այդպես էր: Նա չէր վախենում թատրագետներից, քննադատներից: Նրա անհանգստությունն ու վախը հանդիսատեսն էր, ժողովուրդը: Նրա դրամատուրգիան լի է եւ՛ ծիծաղով, եւ՛ լացով: Երկու դեպքում էլ դրամատուրգը դրսեւորում է տաղանդի իր բացառիկ ուժը: Երեք տասնամյակների ընթացքում դրամատուրգը գրել է տասից ավելի պիեսներ, որոնք բեմադրվել են հանրապետության տարբեր թատրոններում:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ նրա պիեսներում ծիծաղի ու լացի տեսակը միայն անանյանական է: Գրողի անձնական որբերգությունը հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձություններն են, որտեղ դրամատուրգը զարմանալիորեն դրսեւորում է իր անկեղծությունը: Ժ. Անանյանի պիեսներն ունեն հանդիսատեսային բացառիկ հաջողություն: Հանրապետության գրեթե բոլոր խաղարաններում դրանք ունեցել են բեմական երկար կյանք: Ժ. Անանյանի պիեսների ծիծաղելի բեռները գալիս են կյանքի ու հասարակության մեջ տեղի ունեցող ցավագին երեւույթներից: Դրամատուրգին հաջողվում է ստեղծել դրություններ կոմեդիաներ, որոնցում դրամատուրգիական կառուցվածքը եւ կենդանի բնավորություններով կերտված կերպարները դառնում են արդիական եւ ընդունելի:

1978-ից Ժ. Անանյանի «Տախի, տախի» պիեսը հայ եւ ոչ միայն հայ հանդիսատեսի սիրելի եւ ընդունելի կատակերգությունն է: Կարո Խաչվանքյանի եւ Սվետլանա Գրիգորյանի մասնակցությամբ այդ ներկայացումը ցուցադրվել է 600 անգամ, իսկ տեսաժապավենը շրջում է աշխարհով մեկ: Եթե ընդունելի է այն փաստը, որ դրամատուրգիայում կատակերգությունը ծիծաղ առաջացնող ժանրն է, իսկ որբերգությունը՝ արցունք, ապա Ժ. Անանյանի դրամատուրգիայում ցավից է ծնվում ծիծաղը, հոգու ցավից է արցունք առաջանում: Հանդիսատեսը «անհոգ» ծիծաղում է, որը շատ առագ կորչում է դահլիճում, իսկ դրամատուրգի ցավոտ սիրտն այդ ծիծաղից ցնցվում է:

1983թ. Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը ներկայացրեց Ժ. Անանյանի «Իմ տունը քո տունը չէ» պիեսը՝ Ամեն էլբակյանի բեմադրությամբ: Շոնդալից հաջողությամբ 500 անգամ այն գերեց հայ հանդիսատեսին: 1996թ-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը բեմադրում է Ժ. Անանյանի «Կարուսել» («Ես եմ, եկել եմ») ներկայացումը: Կրկին ներկայացման մեջ իրենց վարպետ խաղով փայլեցին ժողովրդական արտիստներ Կարո Խաչվանքյանը եւ Սվետլանա Գրիգորյանը: Ժ. Անանյանը Հայաստանի պետական թատրոններում ամենից շատ բեմադրված հեղինակն է վերջին երկու տասնամյակում: Դրամատուրգի պիեսներն ունեցել են նաեւ ռադիո եւ հեռատեսային բեմադրություններ՝ «Տախի, տախի», «Սրբատակեր», «Վաղը՝ հինգ անց կեսին», «Ես եմ, եկել եմ»: Ժ. Անանյանի պիեսները բեմադրել են Նյու Յորքի, Լոս Անջելեսի, Հալեպի, Բեյրութի հայկական թատերախմբերը:

Ժ. Անանյանը արտակարգ մարդ էր, հրաբալի կատակերգու, յուրահատուկ մտքի ու խոսքի մեջ հումոր կար: Նրա հումորը ճշմարիտ է ու մշտատեւ, ինչպես իր դրամատուրգիան: Ժ. Անանյանը թողել է մարդու եւ գրողի անբասիր անուն, որը երբեք չի մոռացվի նրան ճանաչողների եւ ընթերցողների հիշողության մեջ:

ՌՈԲԵՐՏ ԴԱՎԹՅԱՆ

Երկրի հավատավորի կամքով

Նկարչի արվեստանոցում ենք, Երեւանի ծայրամասերից մեկում, սպիտակ ներկած դուռ, վրան մատիտով գրված՝ Կ. Սմբատյան: Նկարիչն ինքն իր մեջ այնպես է խորասուզված, որ աստ ոչինչ չի նկատում, աշխարհն իր առօրյա ընթացքի մեջ, ինքը (միտքը) աստ խոր հեռուներից է գալիս: Ժամանակն այստեղ կարծես մոռացության է մատնված, տրված գույնի կախարդանքին, գույնի բացվող «մերկություններին»: Դիմացը կտավներ են իրար վրա շարված, մեզ է նայում մեկ այլը կույր ծեր ֆիդային՝ առնական, դեմքին՝ վրեժի ու ուժի գրկումներով: Հնաոճ իրեր են, պարզ, անփույթ վիճակ, նկարիչը ժամանակի մեջ ինքնամոռաց, անփույթ, ասես լեռներում է... (բայց բանկումի պահեր է ունենում, իսկական մտավորականի կեցվածքով՝ հասկացիս ազգային ու սոցիալական խոցելի սահմաններում): Չգիտես ինչու՝ Սեզանին հիշեցի: Մի փոքր նկար այստեղ է շոյում. թանձր գունային խվածքներ, զգացմունքների կուտակումներ՝ իմպրեսիոնիզմի ոճով արված: «Շատ վաղուց եմ արել, 21 տարեկանում, էդ ժամանակ նկարչությունից ինչ էի հասկանում: Հիմա գիտեմ՝ նկարչությունը ճակատագիր է...»:

Արդյոք որ է. արդյոք հայոց գիտակցության մեջ որբերգական գույների հետ է զուգակցվում, ենթագիտակցական շերտերում անգամ՝ բռունցքված ցավի ու վրեժի վերածվում: Հուշի, հիշողության, ոգեկոչումի օրեր են...

«Առամ Խաչատրյանն իր 2-րդ սիմֆոնիան իրականում նվիրել է Գարեգին Նժդեհին, գրել է 1943-44 թթ., երբ ինքը բավական երիտասարդ էր: Այդ մասին, իհարկե, տեղյակ չեն, ինքն իր մեջ, այդպես... Վարդան Վարդանյանի եւ Հայկազ Խաչատրյանի հետ գնացել էինք Մոսկվա: 1964 թ. սեպտեմբերն էր»:

Հայկազ Խաչատրյանը՝ ազգային ինքնորոշման գաղափարի առաջին ջատագովներից ու զինվորներից, 1966 թ. Երեւանում հիմնադրեց ընդհատակյա «Ազգային Միացյալ կուսակցությունը» եւ հրատարակեց «Փարոս» թերթը:

«Վարդան Վարդանյանը մոտ էր Առամ Խաչատրյանին: Նա զանգեց Առամ Իլյիչին եւ հանդիպում խնդրեց: Հակառակի պես ես չգնացի. ժամադրված էի: Առամ Խաչատրյանը մի փիլ գինովցած է լինում: Գրկում է տղաներին ու ասում. «Տղերք ջան, ամբողջ աշխարհը մի քանի ամսից պիտի իմանա Հայոց եղեռնի 50-ամյակի մասին, ինչ հնարավորություն ունենք, պիտի օգտագործենք»: Հաջորդ օրը Հայկազն ինձ ասաց. «Ընց չեկար, ինչ բաց թողիր: Առամ Խաչատրյանն այսօր թիվ մեկ հայն է, գիտես որ Ա. Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիան նվիրված է Գ. Նժդեհին: Այդ ժամանակներում Նժդեհի անունը վախենում էին տալ, Հայկազը միակն էր, որ չէր վախենում: Նա Գետրգ Չաուշի ու Նժդեհի պատգամները ուներ:

...1965-ին ինձ բռնեցին, որովհետեւ ցույցի կազմակերպիչներից մեկը ես էի, հրապարակի գաղափարն իմն էր: Հայկազին երբ ասի՝ նա թե. «Ոչ մի դեպքում, ուզում ես՝ մանկիկին խանձարուրի մեջ խեղդեն: Կգնանք, քայլելով արձանի շուրջը կպտտվենք ու կշարունակենք մինչեւ Կոմիտասի գերեզման, հետո կվերադառնանք: Ասի՝ Հայկազ ջան, դա այնքան աննշան բան է, հիշում ես՝ Առամ Իլյիչն ինչ էր ասում. աշխարհը չգիտի եղեռնի մասին, եթե մի արտասովոր բան կատարվի, նոր կիմանա: Հիմա արտասովորը այն է, որ հավաքվենք Լենինի հրապարակում: Այդ անունից բռնկվեց, նա տեղի էր տալիս անուններին՝ ոչ մի դեպքում, թույլ չեմ տա: Ցույցից հետո ինձ բռնեցին, տարան. մեկը մատնել էր: Հետո պարզվեց, որ Հայկազին ու տղաներին էլ են բռնել: Հետագայում նոր իմացա, ովքեր են եղել՝ Պարույր Հայրիկյան, Ստեփան Զատիկյան, Անդրանիկ Մարգարյան, Աշոտ Նավասարդյան: Ինձ մի քանի ժամ պահեցին, մեկն ասաց՝ գնացեք, փախեք, տխուր այլերով երիտասարդ էր, բարձրահասակ:

...Հայկազը բանտից 5 տարի հետո վերադարձավ: Հետո իրեն նորից բռնեցին, 2 տարի էլ նստեց: Մորդովիայում էր: «Գիտես Կարեն, ասում էր, մեր ժողովուրդը հանճարեղ ժողովուրդ է, մենք դավաճաններ չունենք: Նույն հանցանքի համար հրեաներին ու ռուսներին 10-15 տարի էին տալիս, մեզ՝ 3-5 տարի: Այնուամենայնիվ, թեկուզ ԿԳԲ-ում, բայց այնտեղ էլ հայեր են: ԿԳԲ-ում ինձ քննողներից մեկը զանգում է մի օր, թե՝ ուզում եմ զրուցել ձեզ հետ: Զայրացա: Ասաց՝ կարեւոր մի հարցի մասին եմ խոսելու: Համաձայնեցի: Մարդը եկավ. «Հայկազ ջան, ասաց, դու ազնիվ մարդ ես, ողջ կյանքդ նվիրել ես ժողովրդին, մենք էլ մեր գործն ենք անում, ճիշտ է՝ ձեզ վնաս ենք տալիս... ես քեզ ուզում եմ օգնել. քեզանից մի նկար եմ ուզում գնել, կարող եմ գումարն այնպես էլ տալ, բայց ավելի պատշաճ է, որ մի նկար գնեմ: Լավ, ասացի, որն ես հավանում: Թե՝ «Արարատը»: Հանեց 300 ռուբլի տվեց, փոքր չափի նկար էր: Պատմելիս Հայկազը՝ այդ երկաթյա մարդը, փիլ էր մնում արտասվեր: Խեղճ մարդ, հոգեպես ինչքան է տանջվել: Ինչպես է ազդվել, որ եկել է ինձ մոտ սիրտը բացելու, դա է ինձ մխիթարողը»:

«ԿԳԲ-ից ինձ մոտ էլ էին գալիս, շարունակում է Կարեն Սմբատյանը: 80-ականներին, երբ սկսել էի ֆիդայիներին նկարել, չգիտես՝ որտեղից իմացել էին: Մի օր եկան. մի կարգին մարդ էր, նրա հետ մեկն էլ կար. իմ ընկերներից էր, գաղտնի ասաց. «Կարեն, ԿԳԲ-ից է, արտահայտություններիդ մեջ զգույշ եղիր»: Ասի՝ հենց հակառակն եմ անելու, անզգույշ եմ լինելու, հետաքրքրական է՝ ինչ պիտի լինի: Չէ, ասաց, պետք չէ: Էս մարդը նայեց-նայեց նկարներին, թե՝ ես ԿԳԲ-ի աշխատող եմ: Ասի՝ հա՞, շատ ուրախ եմ: Ասաց՝ լսել եմ, ֆիդայիներ եք նկարում, գիտե՞ք, որ չի կարելի: Հա, գիտեմ: Բա ինչո՞ւ եք նկարում: Ասի՝ ինչ եք կարծում, նկարեմ, թե՞ չը՞ նկարեմ, ո՞րն է ճիշտը: Այս տղան, թե՝ նկարեք, բայց ոչ մեկին ցույց մի տվեք: Հետագայում գուցե առիթը ներկայանա...»:

Առիթը շատ էլ սպասեցնել չտվեց: 1988-ի համազգային շարժումն արթնացրեց հավիտյան քնած թվացող մեր ազգային ոգին՝ հնագույն արմատներից սերվող, ամենաարբեր ելեւէջումներով՝ իբրեւ տարերք, իբրեւ հեղեղ: Այդ տարիներին Կարեն Սմբատյանը նկարեց ավելի քան 250 ազատամարտիկների դիմանկար: Այսօրվա՝ նկարիչների միության ցուցահանդեսին, նրա «Քելե լար» կտավը խորհրդանշելու է երկրի իսկական հավատավորի կամքը՝ ազգային ոգու շարունակելիությանը տեր կանգնելու կենսահաստատ գույներով:

ՄԵԼՈՒՀԻ ԲԱԳՈՒՅԱՆ

Չեխահայությունը ապրիլի 24-ը կնշի ցույցով ու պատարագով

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցը դեռեւս կազմակերպչական հզոր կառույցներ չունեցող չեխահայությունը կնշի մի քանի ձեռնարկումներով:

Պրահայում ապրիլի 22-ի երեկոյան կաթոլիկների Սուրբ Սալվատոր եկեղեցում տեղի կունենա Կարլովի համալսարանի երգչախմբի եւ նվագախմբի Հայաստանին նվիրված համերգը՝ ղեկավարությամբ դիրիժոր Հայկ Ութիջյանի: Համերգի կազմակերպիչն է Արխա չեխական մարդասիրական կազմակերպությունը, որն ամեն տարի նմանատիպ միջոցառումներից ստացված հասույթը օգտագործում է Գյումրու ծերանոցի օգնության ծրագրում:

Նույն օրը երեկոյան Պրահայի հայտնի Վինոհրադիի թատրոնում կրկին կներկայացվի Ռիչարդ Կալինոսկու «Գազանը լուսնի վրա» հանրահայտ պիեսը՝ Յիրժի Տարանտի բեմադրությամբ:

Ապրիլի 24-ին, ժամը 14:00-ից մինչեւ 14:30 Պրահայի կենտրոնական Ստարոմեստսկա հրապարակում տեղի կունենա խաղաղ ցույց, որը կանցնի ցեղասպանությունը դատապարտելու եւ Թուրքիայի ու Չեխիայի խորհրդարանի կողմից այն ճանաչելու պահանջով:

Ցույցից հետո հրապարակի հարեւանությամբ գտնվող ավետարանչականների Ս. Սալվատորա եկեղեցում հոգեհանգստյան պատարագ կմատուցի Չեխիայի հայ համայնքի նորանշանակ հոգեւոր հովիվ Բարսեղ աբեղա Փիլավչյանը: Պատարագի ընթացքում իրենց աղոթքներով հայր սուրբին կմիանան նաեւ ավետարանչական ու կաթոլիկ եկեղեցու հրավիրյալ հոգեւորականները: Պատարագին հրավիրված են Չեխիայի սենատորներ եւ խորհրդարանի ստորին պալատի պատգամավորներ, հասարակական ու մշակութային գործիչներ, լրագրողներ: Հակիրճ ելույթով հանդես կգա բազմիցս Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում ռեպորտաժներ նկարահանած հեռուստալրագրող, սենատոր Յարոմիր Շտեփինան:

ՀԱՐՈՒԹ ԱՍԱՏՐՅԱՆ

Պրահա,

«Օրեր» եվրոպական ամսագիր

Ցուցահանդես ազգային գրադարանում

«Հայոց ցեղասպանություն-90» ցուցահանդեսը, որը բացվեց երեկ՝ ազգային գրադարանում, 5 խորագրերով՝ Հայոց եղեռնը պատմության եւ վավերագրերի, գեղարվեստական գրականության, կերպարվեստի, նահատակ գրողների գրքերի եւ երաժշտության մեջ, ներկայացնում էր նահատակ գրողների գրքեր, ինքնագրեր, գեղարվեստական եւ երաժշտական գրականություն:

Տնօրեն Դավիթ Սարգսյանը տեղեկացրեց, որ գրադարանի հեսազոտությունների եւ մատենագիտության բաժինն արդեն հրատարակության է պատրաստել «Հայոց ցեղասպանության մատենագիտությունը» գիրքը, որը պետական աջակցությամբ կհրատարակվի այս տարի, որպես ուղեցույց հետագա ուսումնասիրությունների համար, որը կհրատարակվի նաեւ օտար լեզուներով:

Հնատիպ արխիվային գրականության բաժինը ներկայացրել էր 164 միավոր գիրք, որից 63-ը Գրիգոր Զոհրաբի անձնական գրադարանի գրքերն էին՝ նրա անձնական կնիքով:

«Գարուն ա, ձուն ա արել» խորագրի ներքո գրադարանի երաժշտության եւ նոտային գրականության բաժինը ներկայացրել էր Վահան Թեքեյանի խոսքերով գրված Էդուարդ Հակոբյանի մահերգը, հայոց աշխարհի տարբեր գավառներում եղեռնի թեմաներով ստեղծված երգեր, ողբեր, նոտաներ, հայդուկների երգեր, ինչպես նաեւ Կոմիտասի ստեղծագործությունները:

Թուրքերեն-հայերեն բառարանի, հայերեն-թուրքերեն զրուցարանի հեղինակ Քեյթի Գունդակյանի լուսանկարներով ցուցահանդեսում ներկայացված էին պատմական Հայաստանի՝ Կարս, Աղթամար, Լեռնապար, Բայազետ, Վարագ, Անի, Հայկաբերդ քաղաքների կիսավեր եւ կիսաքանդ հուշարձանները, եկեղեցիները եւ պատմամշակութային կոթողները:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կսեփականաշնորհվեն «Հայֆիլմ» ու պետկրկեսը

Շատ պետգույքի կառավարման վարչության պետի տեղակալ Աշոտ Մարկոսյանի, դա ոչ թե «սեփականաշնորհում է դասական առումով», այլ «պետական ոչ առեւտրային կազմակերպությունների գույքի օտարում»: Երկու դեպքում էլ սեփականատերերը կընտրվեն մրցույթով, որը կհայտարարվի առաջիկա երեք ամսում, իսկ հաղթողների առաջ կդրվեն որոշակի նախապայմաններ:

«Հայֆիլմ» կինոստուդիայի եւ պետական կրկեսի օտարման նպատակներն են ներդրումների ներգրավումն այս ոլորտներում, սոցիալական խնդիրների լուծումն ու նոր աշխատատեղերի ստեղծումը, պետական ֆինանսավորման դադարեցումը, իսկ միայն «Հայֆիլմի» համար նաեւ նրա նկարահանած ավելի քան 400 ֆիլմերի պահպանումը: Վերջիններս պետք է թվայնացվեն, ինչի շնորհիվ կլուծվի դրանց հիմնավոր պահպանման հարցը:

Պետգույքի կառավարման վարչության պետի տեղակալը հայտնեց, որ օտարվելու են շուրջ 24 հազար քմ տարածք զբաղեցնող «Հայֆիլմի» շենքն ու շինությունները, կինոբեմադրական սարքավորումները: Վաճառի գինն է 266,9 մլն դրամ: Նոր սեփականատերն առաջիկա 10 տարիներին պետք է իրագործի 30 մլրդ դրամի ներդրումային ծրագիր, որը նվազագույն գումարն է տեխնիկական վերազինում իրականացնելու եւ արդյունավետ կինոարտադրություն կազմակերպելու համար: 1 տարում պետք է պահպանվեն կինոստուդիայի 300 աշխատատեղերը՝ 50 հազար դրամ նվազագույն աշխատավարձի չափով, ինչպես նաեւ «Հայֆիլմի» 7 հոգուց բաղկացած գեղարվեստական խորհուրդը: Աշոտ Մարկոսյանը տեղեկացրեց, որ վերջինս պետք է հավանություն տա տարեկան 4 գեղարվեստական ֆիլմերի, 5 մուլտիպլիկացիոն եւ վավերագրական ֆիլմերի նկարահանմանը: Սա ֆիլմերի այն նվազագույն սահմանաչափն է, որ պետք է նկարահանվի յուրաքանչյուր տարի՝ առաջիկա հինգ տարիներին: Նոր սեփականատերը 50 տարում իրավունք կունենա օգտագործելու «Հայֆիլմի» արտանետիքը (Սասունցի Դավթի արձանի պատկերը):

Պետկրկեսի գույքի վաճառքի արժեքն է 40 մլն դրամ: Սահմանված նախապայմաններից են 25 տարում կրկեսի մասնագիտական պրոֆիլի պահպանումը, 74 աշխատողների համար մեկ տարում նվազագույնը 50 հազար դրամ աշխատավարձով ապահովումը: Կրկեսի շենքի 0,5 հա կազմող տարածքը կտրվի վարձակալության: «ՈրքանՆ է կրկեսի սեփականատիրոջ առջեւ դրվող ներդրումային պարտավորությունների չափը» հարցին Աշոտ Մարկոսյանը պատասխանեց, որ այդպիսի պարտավորություններ դրված են, բայց կոնկրետ գումար չի ամրագրված: Նախապատվությունը տրվելու է առավել շատ գումար առաջարկողին:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քառյակը շարունակում է գավաթային մրցավեճը

Ֆուտբոլի Հայաստանի «Անկախության» գավաթի խաղարկությունը թեւակոխել է վճռական փուլ: Պատվավոր մրցանակի համար մեկնարկի դուռ եկած 17 ակումբներից պայքարը շարունակում են չորս ուժեղագույնները: Այսօր կկայանան կիսաեզրափակիչի առաջին հանդիպումները: «Հանրապետական» մարզադաշտում «Էսթեղլալ-Կոտայքը» կիյուրընկալի «Միկային», իսկ Մալաթիայի մարզադպրոցի խաղադաշտում կմրցեն «Բանանցն» ու «Կիլիկիան»: Պատասխան հանդիպումները տեղի կունենան մայիսի 26-ին:

Պայքարը շարունակող քառյակից հաստատես ուշագրավ է «Կիլիկիայի» հաջողությունը, որը պատվավոր մրցանակի խաղարկությունից դուրս մղեց երկրի ներկայիս գավաթակիր «Փյունիկին»: ՀՖ երեակի գավաթակիր «Փյունիկը» սովորաբար հաջող է հանդես գալիս գավաթի խաղարկություններում: Մինչ այս խաղարկությունը, միայն 1995 թ. էր «Փյունիկը» պայքարից դուրս մնացել քառորդ եզրափակիչից: Իսկ «Կիլիկիան» իր պատմության մեջ 2-րդ անգամ է հանդես գալու կիսաեզրափակիչում: Առաջին անգամ կիլիկիացիները կիսաեզրափակիչ էին մտել 2000 թ.: Այդ տարի նրանք երկու խաղերի արդյունքով (1-1, 1-0) առավելության հասնելով «Շիրակի» նկատմամբ, կիսաեզրափակիչում մրցեցին «Զվարթնոցի» հետ: Առաջին խաղում, հյուրընկալվելիս «Կիլիկիան» զիջեց 0-1 հաշվով: «Հրազդանում» կայացած պատասխան հանդիպումը 51-րդ րոպեին մնաց անավարտ: Այդ պահին հաշիվը դեռ չէր բացվել: «Կիլիկիան» դժգոհ լինելով մրցավար Արարատ Ճաղարյանի գործողություններից, լքեց խաղադաշտը:

«Միկան» իրավամբ գավաթային թիմի համբավ ունի: 2000 թ. հիմնադրված ակումբը նվազագույնը հասել է մինչեւ կիսաեզրափակիչ՝ երեք անգամ (2000-01, 03 թթ.) դառնալով գավաթակիր: Գավաթի խաղարկություններում «Միկան» յուրօրինակ ռեկորդակիր է: 2003 թ. խաղարկությունից սկսած թիմը 14 խաղ անընդմեջ դարձյալ մահել էր անառիկ՝ խփելով 44 գնդակ: Եվ միայն «Երեւան Յունայթեդի» հետ ընթացիկ խաղարկության 1/8 եզրափակիչի պատասխան խաղում ընդհատվեց տղավորիչ այդ շարքը: Ֆորչունեսին վերջապես հաջողվեց խոցել «Միկայի» դարպասը: Կիսաեզրափակիչում «Միկայի» մրցակից «Էսթեղլալ-Կոտայքն» էլ ժամանակին բավական հաջող է հանդես եկել գավաթի խաղարկություններում: 1995 եւ 1996 թթ. «Կոտայքը» 2 տարի անընդմեջ մտել է եզրափակիչ՝ պարտվելով համապատասխանաբար «Արարատին» (2-4) եւ «Փյունիկին» (2-3): Կոտայքցիները 3-րդ անգամ են կիսաեզրափակիչում հանդես գալու: 1995 թ. նրանք կիսաեզրափակիչում 2 խաղերի արդյունքով (2-1, 0-0) առավելության են հասել «Շիրակի» նկատմամբ, իսկ հաջորդ տարի այդ փուլում կրկին հաղթահարել են շիրակցիների դիմադրությունը (1-0, 1-1): Կհաջողվի՞ արդյոք նույնը կրկնել «Միկայի» հետ կիսաեզրափակիչ մրցավեճում: Ի դեպ, գավաթի խաղարկություններում մրցակիցներն առաջին անգամ են հանդիպելու: Այսօրվա հանդիպումը «Էսթեղլալ-Կոտայքի» համար կլինի գավաթային 47-րդ խաղը (+20=5-21, 71-73), իսկ «Միկան» կանցկացնի 38-րդ հանդիպումը (+25=7-5, 92-25):

Կիսաեզրափակիչի չորրորդ մասնակից «Բանանցն» ընթացիկ խաղարկության ամենաարդյունավետ թիմն է: Չորս խաղում «Բանանցը» խփել է 30 գնդակ (միջինը՝ 7,5 գոլ): Սա յուրօրինակ ռեկորդ է: Պատահական չէ, որ ընթացիկ խաղարկության ռմբարկուների ցուցակը գլխավորում են «Բանանցի» հարձակվողներ Արամ Հակոբյանն ու Սամվել Մելոնյանը՝ 7-ական գնդակ: Արամն ընդհանրապես գործող ֆուտբոլիստների մեջ յուրօրինակ ռեկորդակիր է: Նա գավաթային հանդիպումներում արդեն խփել է 22 գնդակ եւ հնարավորություն ունի տարիներ անց գերազանցելու Գեղամ Հովհաննիսյանի արդյունավետության ռեկորդը (32 գոլ):

ՀՖ անդրանիկ գավաթակիրը վերջին երկու տարիներին անհաջող փորձեր է կատարել տիրելու գավաթին՝ եզրափակիչում զիջելով համապատասխանաբար «Միկային» (0-1) եւ «Փյունիկին» (0-0, 5-6՝ 11 մ): 5 անգամ մտնելով կիսաեզրափակիչ, «Բանանցին» երեք անգամ հաջողվել է եզրափակիչի ուղեգիր նվաճել: Ինչպիսի՞ն կլինի «Բանանցի» 6-րդ փորձը: «Կիլիկիայի» հետ հանդիպումը «Բանանցի» համար կլինի գավաթային 42-րդ խաղը (+25=7-9, 124-38): «Կիլիկիան» կանցկացնի 23-րդ հանդիպումը (+9=8-5, 32-18): Հետաքրքրական է, որ «Բանանցի» եւ «Կիլիկիայի» գավաթային ճանապարհներն էլ առաջին անգամ են հատվելու:

Ուշագրավ մեկ փաստ եւս. վերջին երկու խաղարկություններում լավագույն քառյակն անփոփոխ է եղել՝ «Փյունիկ», «Բանանց», «Միկա», «Շիրակ»: Այս տարի այդ ցանկում երկու փոփոխություն է կատարվել՝ «Շիրակին» ու «Փյունիկին» փոխարինել են «Կիլիկիան» եւ «Էսթեղլալ-Կոտայքը»: Կիսաեզրափակիչների անփոփոխ մասնակիցը «Միկան» է, որը 2000 թ. մշտապես տեղ է զբաղեցնում լավագույն քառյակում:

ՈՒԵՖԱ-ն հաստատել է ընտրական մրցաշարի նոր կարգը

ՈՒԵՖԱ-ի գործկոմը հաստատել է 2008 թ. ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի անցկացման նոր մրցակարգը, ինչպես նաեւ որոշել է եվրոգավաթների եզրափակիչ հանդիպումների վայրը:

Ըստ նոր մրցակարգի, 2008 թ. Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում կկազմավորվի յոթ խումբ: Խմբերից մեկում հանդես կգան ութ հավաքականներ, մյուսներում՝ յոթական: Խմբերում առաջին երկու տեղերը գրաված հավաքականները Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր կնվաճեն: Առանց ընտրական մրցախաղերի Եվրոպայի առաջնության կազմակերպիչ երկրների՝ Ավստրիայի եւ Շվեյցարիայի հավաքականները եւս հանդես կգան եզրափակիչ փուլում: Ընտրական մրցախաղերի մեկնարկը կտրվի 2006 թ. աշնանը:

Համեմատության համար նշենք, որ 2004 թ. Եվրոպայի առաջնության ընտրական մրցախաղերը կայացել էին 10 խմբով: Խմբերի հաղթողները ուղեգիր էին նվաճել, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած հավաքականներն անցումային խաղերում վիճարկել էին մնացած 5 ուղեգրերը:

ՈՒԵՖԱ-ի գործկոմն անվանել է նաեւ այն քաղաքները, որտեղ կանցկացվեն եվրոգավաթների եզրափակիչ հանդիպումները: 2006 թ. չեմպիոնների լիգայի վճռահանդիպումները տեղի կունենա Փարիզի Սեն Դենի որ հանդիպումը տեղի կունենա Փարիզի «Ստադ դը Ֆրանս» մարզադաշտում, որը արվարձանի «Ստադ դը Ֆրանս» մարզադաշտում համար: Նախատեսված է 80 հազար հանդիսականի համար: Նշենք, որ այս մարզադաշտում 2000 թ. կայացել է «Ռեալ»-«Վալենսիա» չեմպիոնների լիգայի եզրափակիչը, որն ավարտվել է մադրիդցիների հաղթանակով (3-0): Իսկ ահա, Փարիզի «Պարկ դը Պրենս» մարզադաշտում չեմպիոնների գավաթի եզրափակիչ 3 հանդիպում է անցկացվել 1956, 1975 եւ 1981 թ.: Այս մարզադաշտում են անցկացվել նաեւ 1978 եւ 1995 թթ. գավաթակիրների գավաթի եւ 1998 թ. ՈՒԵՖԱ-ի գավաթի եզրափակիչ խաղերը:

2007 թ. չեմպիոնների լիգայի եզրափակիչի մասնակիցներին կիյուրընկալի Աթենքի օլիմպիական մարզադաշտը, որը տեղավորում է 72 հազար հանդիսական: 2006 թ. ՈՒԵՖԱ-ի գավաթի եզրափակիչ հանդիպման վայր է ընտրվել Էյնդհովենի 35 հազարանոց մարզադաշտը: Հաջորդ տարի վճռորոշ խաղը կկայանա Գլազգոյի 52 հազարանոց «Հեմդեն պարկ» մարզադաշտում, որտեղ 1960 եւ 1976 թթ. անցկացվել են չեմպիոնների գավաթի, 2002 թ. չեմպիոնների լիգայի եւ 1962, 1966 թթ. գավաթակիրների գավաթի եզրափակիչ հանդիպումները: Չեմպիոնների լիգայի այս տարվա եզրափակիչ մրցախաղը տեղի կունենա մայիսի 25-ին Սամբուլի «Աթաթուրք» մարզադաշտում, իսկ ՈՒԵՖԱ-ի գավաթի վճռորոշ խաղը կանցկացվի Լիսաբոնի «Ժոզե Ալվալադե» մարզադաշտում:

ՈՒԵՖԱ-ի գործկոմը որոշել է նաեւ 2007 թ. ֆուտզալի Եվրոպայի առաջնությունն անցկացնել Պորտուգալիայում, նոյեմբերին:

ՀԱՄԱՍ

Արոնյանի հաղթական մեկնարկը

Շախմատի Ռուսաստանի թիմային առաջնության 2-րդ տուրում «Տոմսկ-400» թիմի կազմում հանդես եկող Լեւոն Արոնյանը 3-րդ խաղատախտակի վրա սպիտակներով հաղթեց Վոլկովին: Իսկ ահա առաջին երկու խաղատախտակների վրա խաղացող Մորոզեւիչն ու Բոլոգանը զիջեցին մրցակիցներին՝ համապատասխանաբար պարտվելով Իվանչուկից ու Սուտովսկուց: «Տոմսկ-400»-ից իրենց թիմին հաղթական միավորներ պարգեւեցին նաեւ Սմիռնովն ու Յակովենկոն, իսկ Ինարկիեւը պարտվեց: Այսպիսով ՏՊՍ-ի հետ մրցախաղը «Տոմսկ-400»-ը ավարտեց ոչ-ոքի՝ 3-3: 2 տուրից հետո «Տոմսկ-400»-ը վաստակել է 6,5 միավոր եւ բաժանում է 5-8-րդ տեղերը: Իսկ առաջատարի դերը սանձնել է «Լադան», որը 5,5-0,5 հաշվով առավելության հասավ ՕՇԿ-ի նկատմամբ: «Լադան» ունի 8 միավոր: Առաջատարին կես միավոր է զիջում Սամարայի «Թերմոստեղսը», որը 2,5-3,5 հաշվով պարտվեց «Դեբյուտին»:

Եկատերինբուրգի «Մամս Վենի» շախմատիստները, որի կազմում հայտավորված են Վլադիմիր Հակոբյանն ու Ռաֆայել Վահանյանը, 4-2 հաշվով պարտության մատնելով Նիժնի Տագիլի «Պոլիտեխնիկին», վաստակեցին 6,5 միավոր: Ցավոք, լրատվամիջոցները չեն նշել, թե այդ մրցախաղում թիմի կազմում ովքեր են խաղացել:

Կանանց մրցաշարում Չելյաբինսկի «Յուժնի Ուրալ» թիմում հանդես է գալիս գրոսմայստեր Լիլիթ Մկրտչյանը, որն առաջին տուրում պարտվել էր Նադեժդա Կոսինցեւային:

ՀՀ հավաքականի դիրքն անփոփոխ է

ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների վարկանիշային հերթական ցուցակը: Մարս ամսվա համեմատ Հայաստանի ազգային հավաքականը պահպանել է իր տեղը 120-րդ հորիզոնականում, թեեւ վարկանիշն աճել է 9-ով: Որոշակի փոփոխություններ են կատարվել լավագույն տասնյակի ներսում: Այսպես, ՀՖ հավաքականի մրցակիցներից մեկը՝ Չեխիայի ընտրանին Ֆրանսիացիների փոխարեն զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը՝ իր 4-րդ տեղը զիջելով վերջիններիս: 2 տեղով վեր են բարձրացել հոլանդացիները՝ զբաղեցնելով 5-րդ հորիզոնականը: Նոյնքիսի առաջընթաց են ապրել անգլիացիները, իսկ Իսպանիայի եւ Մեքսիկայի հավաքականները 2-ական հորիզոնականով նահանջել են:

Ներկայացնում ենք լավագույն տասնյակի եւ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականների ցուցանիշները.

1. Բրազիլիա	834
2. Չեխիա	783
3. Արգենտինա	780
4. Ֆրանսիա	777
5. Հոլանդիա	763
6. Անգլիա	757
7. Իսպանիա	755
8. Մեքսիկա	754
9. Պորտուգալիա	741
10. Իտալիա	735
31. Ռուսաստան	653
42. Ուկրաինա	614
54. Ուզբեկստան	588
63. Բելառուս	566
65. Լատվիա	560
82. Էստոնիա	516
98. Լիտվա	476
100. Թուրքմենստան	472
102. Վրաստան	470
115. Մոլդովա	431
116. Ադրբեջան	427
120. Հայաստան	406
138. Տաջիկստան	347
149. Ղազախստան	306
152. Ղրղզստան	287

Ռուսաստանցի մարզուհիներն առայժմ լավագույնն են

Սոֆիայում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնության երկրորդ օրը մեդալների երեք հավաքածու գտավ իր տերերին: Կանանց մրցաշարում առայժմ բոլորից հաջող են հանդես գալիս Ռուսաստանի պատվիրակները: Մրցումների առաջին օրը հաջողության էր հասել Սվետլանա Ուլյանովան: Հաջորդ օրը քաշային երկու կարգերում եւս Եվրոպայի չեմպիոնուհիներ հռչակվեցին ռուս մարզուհիները: Մինչեւ 58 կգ քաշային կարգում հիանալի հանդես եկավ 18-ամյա Մարինա Շայնովան: Նա երկամարտում ցույց տվեց 222,5 (97,5+125) կգ արդյունք: Նրա ցուցանիշը 12,5 կգ-ով գերազանցում է արծաթե մրցանակակիր, լեհ մարզուհի, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոնուհի Ալեքսանդրա Կլեյնովսկայի արդյունքը՝ 210 (90+120) կգ: Բրոնզե մեդալը նվաճեց վերջինիս հայրենակցուհի Մարիեսա Գոսֆրիդը՝ 200 (95+105) կգ:

Մինչեւ 63 կգ քաշային մարզուհիների մրցավեճում ոսկե մեդալի գլխավոր հավակնորդ էր համարվում Եվրոպայի վեցակի չեմպիոնուհի Գերգանա Կիրիլովան (Բուլղարիա): Սակայն բոլորին գերազանցեց 21-ամյա ռուսաստանցի Սվետլանա Շիմկովան, որը երկամարտի 235 (105+130) կգ արդյունքով կանգնեց պատվո պատվանդանի ամենավերին աստիճանին: 2-րդ տեղը զբաղեցրեց լեհ մարզուհի Դոմինիկա Միստեսկան՝ 220 (97,5+122,5) կգ: Նոյնքիսի արդյունք էր ցույց տվել նաեւ Կիրիլովան, որը լեհ մարզուհուց քաշով ավելի ծանր էր, ուստի բավարարվեց բրոնզե մեդալով:

Ծանրորդներն առաջնության պարգեւները վիճարկեցին մինչեւ 62 կգ քաշային կարգում: Այստեղ ոսկե մեդալի գլխավոր հավակնորդը օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների բազմակի մրցանակակիր Հալիլ Մուլլուն էր: Թուրք ծանրորդն առաջին անգամ էր հանդես գալիս ավելի ծանր քաշային կարգում: Չնայած դրան, նրա առավելությունը մրցակիցների նկատմամբ ակնհայտ էր: Նա նույնիսկ երկու վարժություններում էլ հրաժարվեց 3-րդ մոտեցումներից, քանի որ երկու փորձերից հետո արդեն ապահովել էր չեմպիոնի տիտղոսը: Մուլլուն 2-րդ տեղը գրաված բուլղարացի Սետալին Անգելովին գերազանցեց 10 կգ-ով՝ երկամարտում ցույց տալով 307,5 (140+167,5) կգ արդյունք: Բուլղարացու ցուցանիշը 297,5 (132,5+165) կգ էր: Բրոնզե մեդալը նվաճեց ռումինացի Ադրիան Ժիգեուն՝ 295 (132,5+162,5) կգ: Նշենք, որ ռումինացի ծանրորդն էլ անցյալ տարի հանդես էր գալիս մինչեւ 56 կգ քաշային կարգում եւ Աթենքի օլիմպիադայում երկամարտի 275 կգ արդյունքով 6-րդն էր:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հայություն

Ուղերձ

1915 թվականին իր բնօրրան հայրենիքում արեւմտահայության ֆիզիկական բնաջնջումը մարդկային պատմության մեջ մնաց իր չափերով եւ ձեւերով նախադեպը չունեցող ցեղասպանություն: Բացառապես ազգային-էթնիկական հողի վրա երիտթուրքերն իրականացրին մի ողջ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման պետականորեն մշակված եղեռնագործության ծրագիրը, որի նախասկիզբն էր սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հակահայկական ջարդարարական քաղաքականությունը:

Օսմանյան Թուրքիայի կողմից մեկուկես միլիոն հայության անմարդկային եւ եղերական ոչնչացումն ու նրա պատմական հայրենիքի բռնազավթումն իրականացվեց աշխարհի պետությունների եւ մարդկության պաղ ու անհաղորդ հայացքի առջեւ: Հայ ժողովուրդն իր մենակության մեջ եղավ եղեռնազարկ ու մնաց անհայրենիք՝ բռնելով տարագրության ու տառապանքի բազմուղի աշխարհագրության ճանապարհը:

20-րդ դարի սկզբին թուրքական պետության ծրագրած եւ իրականացրած Հայոց ցեղասպանության եւ Արեւմտյան Հայաստանի պատմական ողջ տարածքի բռնազավթման իրողության ոչ միայն խոստովանությունից, այլեւ պատասխանատվությունից չի կարող խուսափել այսօրվա թուրքական պետությունը:

Իր ժողովրդի ու պատմական հայրենիքի կորստյան ցավն ու հայրենատիրության նպատակի զգացողությունն իր հետ անջնջելիորեն մեկընդմիշտ տանելու է հայ ժողովուրդն ու հայոց պետությունը:

Արդ, Հայոց եղեռնից 90 տարի անց Սասունի ու Տարոնի հերոսական նախնիների վերընծայուղված զավակներս մեր խորին խոնարհումն ենք բերում 1915 թ. եղեռնի անմեղ նահատակների հիշատակի առջեւ:

Մենք համամարդկային խղճի ու խաղաղական կամքի դրսեւորման կոչ ենք անում աշխարհի բոլոր խորհրդարաններին դատապարտելու եւ ճանաչելու 1915 թ. օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանությունը, կանխելու պատմական իրողությունը նենգափոխելու եւ պատմական Հայաստանի աշխարհագրությունն ու մշակույթը պղծելու եւ վերացնելու թուրքական այժմյան հիստերիան:

Մենք համազգային միասնականության ու ազգային մեր նպատակներին անմնացորդ նվիրվածության ու ծառայության կոչ ենք անում Հայաստանում եւ աշխարհի տարբեր երկրներում վերապրող եւ ապրող մեր հայրենակիցներին: Քանզի պատմական անցյալից սթափ դասեր առնելով եւ ապրելու վճռականությամբ ապագային նայելով, կարող ենք աշխարհի մեր բարեկամներին ու բնամիներին ապացուցել, որ մեր սերունդն այլեւս ոչ մեկի թույլ չի տա հայ ժողովրդի հետ խոսել 1915-ի արյունոտ լեզվով:

«ԱՍՍՈՒՆ-ՏԱՐՈՆ»
Հայրենակցական միության
խորհուրդ

ՀԱՅՏԱՐԱԲՈՒԹՅՈՒՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՊՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ԳՀԱՇՁԲ - 05/15 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար «**Բագրատաշենի, Ագարակի եւ Բավրայի անասնաբուժական եւ բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում**» աշխատանքների ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1000.0 ՀՀ դրամ փոխանցել «Միջինվեստբանկ» Հ/Հ 175004670790 «Գոհակ» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25 Գ.Մարկոսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00:

Սիրելի արաբկիրցիներ.

Արաբկիրը հայրենադարձների առաջին ավանն է, որ հիմնադրվել է Եղեռնից մազապուրծ գաղթականների համար:

Արաբկիր համայնքում, Կոմիտասի պողոտայի սկզբնամասում (Մերգելյան ինստիտուտին հարող հրապարակում) ***ապրիլի 23-ին տեղադրվելու է խաչ՝ ի հիշատակ Մեծ եղեռնի զոհերի:***

Ապրիլի 23-ին, ժամը 22.30-ին բոլոր արաբկիրցիների մասնակցությամբ կլուսավորվի տեղադրված խաչը եւ կլինի մշակութային փոքրիկ միջոցառում՝ ի նշան մեր հիշողության հարատեւման:

Ճիշտ կեսգիշերին կհնչեն եկեղեցու զանգերը, կվառվեն մոմերն ու կմատուցվի պատարագ:

Արաբկիրցիներ ու Արաբկիրի հյուրեր.

Ոճիրից 90 տարի անց, հարգանքի մեր տուրքը մատուցենք՝ միասին:

Ապրիլի 23-ին, ժամը 22.30-ին Մերգելյան հրապարակ:

ԱՐԱԲԿԻՐԻ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆ

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ի կատարումն ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների մշակվում է **ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլիարի գյուղապետարանի** խմելու-տնտեսական նպատակով «Գյուղի աղբյուր» կոչվող ջրաղբյուրից 0,45 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. ապրիլի 27-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է **ՀՀ Կոտայքի մարզի Արզնի գյուղում գործող «Նինել» ՍՊԸ** ձկնաբուծական նպատակով հորդառատ գետի աջ ափից դրենաժացված ջրաղբյուրներից 26 լ/վրկ ջրի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. ապրիլի 26-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է **ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ գյուղի բնակիչ Հովհաննես Մանուկյանի** ձկնաբուծական նպատակով սառնակոպ աղբյուրի ջրային ռեսուրսից 70 լ/վրկ ջրի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. ապրիլի 26-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելը» տեղեկացնում է

ARMENTEL
ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻԱ
ARMENIA TELEPHONE COMPANY

Սույն թվականի մայիսի 1-ից գործողության մեջ են մտնում տարածքային նոր կոդերը.

Բնակավայրի անվանումը	Հին կոդը	Նոր կոդը
Երեւանի մարզ		
Երեւան	1	10
Կոտայքի մարզ		
Աբովյան	22	222
Մայակովսկի	22 90	222 90
Կամարիս	22 91	222 91
Բալահովիտ	22 91	222 91
Արամուս	22 93	222 93
Արզնի	22 94	222 94
Պտղնի	22 96	222 96
Գեղաշեն	22 97	222 97
Կոտայք	22 99	222 99
Հրազդան	23	223
Ծաղկաձոր	23	223
Լեռնանիստ	23 91	223 91
Բջնի	23 98	223 98
Չարենցավան	26	226
Ալափարս	26 75	226 75
Արզական	26 72	226 72
Եղվարդ	24	224
Նոր-Հաճն	24	224
Նոր-Գեղի	24	224
Զովունի	24 52	224 52
Պառոյան	24 53	224 53
Արգել	24 54	224 54
Արմավիրի մարզ		
Էջմիածին	31	231
Ջվարթնոց	31	231
Բաղրամյան	31 90	231 90
Վաչե	31 91	231 91
Նորակերտ	31 95	231 95
Ջրառատ	31 98	231 98
Խորոնք	31 99	231 99
Արմավիր	37	237
Հոկտեմբեր	37	237
Մեծամոր	37	237
Բաղրամյան	33	233
Մյասնիկյան	33 74	233 74
Քարակերտ	33 75	233 75
Դալարիկ	33 76	233 76
Արարատի մարզ		
Վեդի	34	234
Արարատ	38	238
Արտաշատ	35	235
Մասիս	36	236
Արագածոտնի մարզ		
Աշտարակ	32	232
Թալին	49 0	249 0
Ապարան	52	252
Ծաղկահովիտ	57 0	257 0
Շիրակի մարզ		
Գյումրի	41	312
Ախուրյան	43 00	243 00
Առափի	43 00	243 00
Կամո	43 00	243 00
Ազոյան	45	245
Ամասիա	46	246
Մարալիկ	42	242
Սառնաղբյուր	42 91	242 91
Շիրակավան	42 93	242 93
Անի-կայարան	42 97	242 97
Արթիկ	44	244
Պեմզաշեն	44	244
Փանիկ	44 92	244 92
Արեւշատ	44 95	244 95
Մեծ Մանթաշ	44 96	244 96
Լոռու մարզ		
Վանաձոր	51	322
Լեռնապատ	51 94	322 94
Մարգահովիտ	51 96	322 96
Փամբակ	51 97	322 93
Եղեգնուտ	51 97	322 95
Ջորագետ	51 97	322 97
Լերմոնտովո	51 98	322 98
Վահագնի	51 99	322 99
Սպիտակ	55	255
Ալավերդի	53	253
Տաշիր	54	254
Ստեփանավան	56	256
Գեղարքունիքի մարզ		
Սեւան	61	261
Մարտունի	62	262
Գավառ	64	264
Սարուխան	64	264
Վարդենիս	69	269
Ճամբարակ	65	265
Տավուշի մարզ		
Իջեւան	63	263
Բերդ	67	267
Նոյեմբերյան	66	266
Կողբ	66	266
Դիլիջան	68 0	268 0
Վայոց Ձորի մարզ		
Եղեգնաձոր	81	281
Խաչիկ	81 51	281 51
Արփի	81 91	281 91
Աղավնաձոր	81 93	281 93
Արենի	81 94	281 94
Մալիշկա	81 95	281 95
Ելփին	81 97	281 97
Ռինդ	81 98	281 98
Շատին	81 99	281 99
Վայք	82	282
Ջերմուկ	87	287
Սյունիքի մարզ		
Սիսիան	83 0	283 0
Գորիս	84	284
Վերիշեն	84	284
Խնձորեսկ	84 94	284 94
Կապան	85	285
Քաջարան	85	285
Մեղրի	86 0	286 0
Ագարակ	86	286
ԼՂՀ		
Ստեփանակերտ	71	471
Մարտակերտ	74	474
Հադրութ	75	475
Ասկերան	76	476
Շուշի	77	477
Քաշաթաղ	77 32	477 32
Մարտունի	78	478
ԼՂՀ բջջային ցանց	7	97
Բջջային ցանց		
«Արմենտելի» բջջ. ցանց	9	91
Ղ-Տելեկոմ		93 94

Ծառայություններ	Գործող համարների կարգը	Նոր համարների կարգը
Անվճար զանգի ծառայություններ (Free Phone)	800 xxx	800 xx xxx
Բարձր արժեքով ծառայություններ	90x xxx	90x xx xxx

Անվճար զանգի ծառայություններ (Free Phone)

Ծառայության տեսակը	Հին համարներ	Նոր համարներ
Զոլեթք ֆոլ (Collect Call)	0 800 111	0 800 10 111
Զոլեթք ֆոլ (Collect Call)	0 800 112	0 800 10 112
Զոլեթք ֆոլ (Collect Call)	0 800 122	0 800 10 122
Զոլեթք ֆոլ (Collect Call)	0 800 222	0 800 10 222
«Արմենտելի» ԻՏ ծառայության օպերատիվ արձագանքման կենտրոն	0 800 081	0 800 81 081

Համարհավաքման կարգ

1. Մարզերից, «Արմենտելի» բջջային ցանցից, ԼՂՀ-ից եւ «Ղ-Տելեկոմից» դեպի Երեւան
0+ 10+ բաժանորդի հեռախոսահամարը
2. Երեւանից, «Արմենտելի» բջջային ցանցից, ԼՂՀ-ից եւ «Ղ-Տելեկոմից» դեպի մարզեր
0 + բնակավայրի կոդը + բաժանորդի հեռախոսահամարը
3. Երեւանից, մարզերից, ԼՂՀ-ից եւ «Ղ-Տելեկոմի» դեպի «Արմենտելի» բջջային ցանց
0 + 91 + բջջային բաժանորդի հեռախոսահամարը «Արմենտելի» բջջային ցանցում բջջայինից դեպի բջջային վեցանիշ համարհավաքման կարգը դադարում է գործել
4. Երեւանից, մարզերից, «Արմենտելի» բջջային ցանցից եւ ԼՂՀ-ից դեպի Ղ-Տելեկոմ
0 + 93 + բաժանորդի հեռախոսահամարը
0 + 94 + բաժանորդի հեռախոսահամարը
5. Երեւանից, մարզերից, «Արմենտելի» բջջային ցանցից եւ «Ղ-Տելեկոմից» դեպի ԼՂՀ-ի ֆիքսված հեռախոսային ցանց
0 + ԼՂՀ բնակավայրի կոդը + բաժանորդի հեռախոսահամարը
6. Երեւանից, մարզերից, «Արմենտելի» բջջային ցանցից եւ «Ղ-Տելեկոմից» դեպի ԼՂՀ-ի բջջային ցանց
0 + 97 + բաժանորդի հեռախոսահամարը
7. Երեւանից, մարզերից, «Արմենտելի» բջջային ցանցից, «Ղ-Տելեկոմից» եւ ԼՂՀ-ից դեպի արտերկիր
00 + երկրի կոդը + բնակավայրի կոդը + բաժանորդի հեռախոսահամարը
8. Արտերկրից դեպի Երեւան, մարզեր, «Արմենտելի» բջջային ցանց, «Ղ-Տելեկոմ», ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանց եւ ԼՂՀ բջջային ցանց

Երեւան	+ 374 + 10 + բաժանորդի հեռախոսահամարը
Մարզեր	+ 374 + բնակավայրի կոդը + բաժանորդի հեռախոսահամարը
«Արմենտելի» բջջային ցանց	+ 374 + 91 + բջջային բաժանորդի հեռախոսահամարը
«Ղ-Տելեկոմ»	+ 374 + 93 + բջջային բաժանորդի հեռախոսահամարը + 374 + 94 + բջջային բաժանորդի հեռախոսահամարը
ԼՂՀ ֆիքս. հեռ.ցանց	+ 374 + ԼՂՀ բնակավայրի կոդը+բաժանորդի հեռախոսահամարը
ԼՂՀ բջջային ցանց	+ 374 + 97 + բաժանորդի հեռախոսահամարը

Արմենիա տելեֆոն կոմպանի

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 21. 04. 2005 Գինը՝ 100 դրամ